

«ՍՈՒՆՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում՝ Գործարանային փողոց թիվ 7, թիվ 16 հողամասեր հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում, և ենթակայանների միացումը «Աղթամար» 110ԿՎ օդային գծին

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ԼՐԱՄՇԱԿՈՒՄ

Ձեռնարկող՝ «ՍՈՒՆՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ



Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն	3
2. Հավելվածներ.....	3
3. Օգտագործվող հապավումները.....	4
4. Հայտի կազմման իրավական հիմքերը.....	4
5. Նախատեսվող գործունեության հայտ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	9
6. Գնահատման հայտի մշակման հիմքերը.....	9
7. Տեղակայման տարածքի բնութագրերը.....	10
8. Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը.....	17
9. Նախատեսվող գործունեության բնութագրերը.....	40
10. Շինարարության փուլ.....	44
10.1 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ.....	47
11. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	54
12. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ).....	55
13. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը շինարարության և շահագործման փուլերում	65
14. Մոնիթորինգ.	75
15. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան	76
16. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր).....	94
17. Փակման փուլ	96
18. Հանրային ծանուցում և քնննարկումներ	96
19. Եզրահանգում.....	97
Գրականություն	100

1. Ընդհանուր տեղեկատվություն

Նախնական գնահատման հայտ	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում՝ Գործարանային փողոց թիվ 7, թիվ 16 հողամասեր հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում, և ենթակայանների միացումը «Աղթամար» 110ԿՎ օղային գծին:
Ձեռնարկող	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան, Պուշկինի Փ./Ը/ 41/22 բն. Կենտրոն 0002 :
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածք, Գործարանային փողոց թիվ 7, թիվ 16 հողամասեր:
Պատվիրատու	«Փաուեր Էներջի» ՍՊԸ Power Energy powerenergyllc@yandex.com , 044442224:
Հայտի նախագծող	«Նովալ» ՍՊԸ
Հայտ մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 llc@outlook.com

2. Հավելվածներ

- Հավելված 1.** Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների Պետական գրանցման Վկայականները, պետական ռեգիստրը:
- Հավելված 2.** «ՀԷՑ»ՓԲԸ-ի տեղեկանքը:
- Հավելված 3.** Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիան:
- Հավելված 4.** Ճարտարապետահատակագծային առաջադրանք :
- Հավելված 5.** Արևակայանի հիմքային կոորդինատները
- Հավելված 6.** Համայնքապետարանի տեղեկանքը թափոնների տեղակայման վայրի վերաբերյալ
- Հավելված 7.** ԳՄԱ հնագիտության եզրակացությունը
- Հավելված 8.** Սևան համայնքի ավագանու որոշումը նախատեսվող գործունեության համաձայնության վերաբերյալ
- Հավելված 9.** Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկ:

3. Օգտագործվող հասպավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՕԳ՝ օդային գիծ
ՀԷՑ՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր
Վտ՝ Վատտ
ՖՎ՝ ֆոտովոլտային
ՄՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կՎտ՝ կիլովատտ
ԿՎԱ՝ կիլովոլտ-ամպեր
ՄՎտԺ՝ մեգավատտ ժամ
ԲԲՄ- բաց բաշխիչ սարքավորում

4. Հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք («Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 19994թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր

կազմակերպարավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15.05.2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)– Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք / Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին/ Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանարապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվար 2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թ. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում :
- ❖ ՀՀ կառավարության 02 նոյեմբերի 2017 թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 08 նոյեմբերի 2011թ. «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» N1396 որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 18 հունվարի 2007 թվականի «Սևան» Ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին N 205-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 25 հուլիսի 2019 թվականի «ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն և 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 947-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի 1000 Վ Ո ԼՏ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները հաստատելու մասին N 249 որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2006 թվականի «Էլեկտրակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշում:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի էներգետիկայի բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «արևային էլեկտրակայաններ՝ 3 հա և ավելի տարածք զբաղեցնող»: Նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանը Գործարանային փողոց 16 հողամաս հասցեում զբաղեցնում է 4,6 հա տարածք, Գործարանային փողոց թիվ 7 հողամասում՝ 6. 47 հա, ընդամենը 11,07հա: Հողամասերը իրարից բաժանվում են գրունտային ճանապարհով:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի՝ սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայով՝ Օրենքի Գ կատեգորիայի ընթացակարգով՝ պայմանավորված Օրենքի 12-րդ Գլուխ, 37-րդ հոդվածի(եզրափակիչ մաս և անցումային դրույթներ) պահանջներով: Ներկայացվում է նախնական գնահատման հայտ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն ստանալու նպատակով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացումը՝ նախագծային փաստաթղթին համապատասխան, բացահայտել գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված միջոցառումների կախատեսումները:

Հայտը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

6. Գնահատման հայտի մշակման հիմքերը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի կազմման համար հիմք է հանդիսացել.

- Գործունեության իրականացման նախագծային փաստաթղթերը:
- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականը՝ N 28092023-05-0012, N 02102023-05-0022, Հավելված 1

- Գործունեության իրականացման Լիցենզիան: Հավելված 3
- «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված էլեկտրամատակարարման , տեխնիկական պայմաններ՝ N S-110/01312 առ 15. 02.20234թ. հավելված 2:

7. Նախատեսվող գործունեության բնութագրերը

«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության Արևակայանը տեղակայվելու է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում, Գործարանային փողոց թիվ 7, թիվ 16 հողամասեր հասցեում «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում: Համայնքի միջոցով կատարվել է հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն, ինչը վկայում է գործունեության իրականացման համապատասխանությունը բնակավայրի հեռանկարային զարգացմանը: Գործունեության տարածքի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի: Սևան քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա, Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին՝ լճից 200-250մ հեռավորության վրա: Սևանը գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին, Հրազդանի վերին հոսանքի ավազանում: Ձգվում է Լճաշեն գյուղի մոտից մինչև Սևանի թերակղզի և գրավում Երևան-Դիլիջան, Սևան-Մարտունի խճուղիների հանգույցում տարածվող եռանկյունաձև հարթավայրն ու դրան կից լեռնալանջերը: Սևան քաղաքը՝ ներառյալ Գագարին բնակավայրը, զբաղեցնում է 1784.68հա հողատարածք: Սևանը քաղաք է Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հյուսիսարևմտյան ափին, մայրաքաղաք Երևանից 66 կմ հյուսիս-արևելք և մարզկենտրոն Գավառից 35 կմ հյուսիս:

7.1 Նախատեսվող գործունեության նպատակը: Նախատեսվող «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ արևային կայանի նպատակը ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցումն է, էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023թ. նոյեմբերի 15-ի N393-Ա որոշման համաձայն՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ԼԷN°0753 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2045թ. նոյեմբերի 16-ը գործողության ժամկետով: «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառք՝ երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:

7.2 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը: Կայանը տեղակայված է լինելու «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնքի, գ. Գագարին բնակավայրի տարածքում՝ 7-րդ և 16-րդ հողամասերում: Երկու հողամասերը բաժանվում է

մոտ 4մ լայնությամբ գրունտային ճանապարհով: 7-րդ հողամասը զբաղեցնում է 6,47հա, 16-րդ հողամասը՝ 4.6 հա, տարածք, ընդամենը 11,07 հա տարածք:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի: Արևային կայանի տեղաբաշխման վայրը ընտրված է տեղական ինքնակառավարման մարմինների և հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ՝ հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները:

Տոտովոլային կայանի աշխարհագրական կոորդինատները հետևյալն են՝ հս. լայն. 40°32'50.40"N և արլ. երկայն. 44°51'54.47"E, ծովի մակերևույթից 1888մ բարձրության վրա: Տարածքի ինժեներատեխնիկական ուսումնասիրությունները իրականացվել են «Հայր և Որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից: ՄԴԵ-50M հաստոցով մեխանիկական չոր եղանակով փորվել է 11 հորատանցք՝ յուրաքանչյուրը 3.5զճ/մ խորությամբ, ընդհանուր 38.5 մ խորությամբ: Հորատանցքների հիման վրա կազմվել է երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքներ, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Հորատանցքների, արդյունքները և ֆոնդային նյութերի տվյալները թույլ են տալիս շերտերի նկարագրությունը տալ մինչև 3,5մ խորությամբ՝ համաձայն ըստ ՇՆՁ I-2.101-2002 (ձեռնարկ ՀՀՇՆ I-2.01-99 նորմերի):

Գեոմորֆոլոգիական տեսակետից Հետազոտվող տարածքները գտնվում է Սևանի լեռնաշղթայի հյուսիս-արևմուտքում, Հրազդան գետի ձախափնյակում, մայրաքաղաք Երևանից 66 կմ հյուսիս-արևելք և մարզկենտրոն Գավառից 35 կմ հյուսիս: Գտնվում է ծովի մակերևույթից 1925 մ բարձրության վրա :

Շրջանի երկրաբանական պայմանները տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդական հասակի սպարներ, որոնք ծածկված են Դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներով, որոնք ներկայացված են՝ ավազակավերով և խճային գրունտներով:

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.23 «Շինարարական կլիմայաբանություն» Ուսումնասիրվող գոտին համաձայն «Շինարարական կլիմայաբանության» գտնվում է «ցուրտ կլիմայական շրջանում: Շրջանն ունի ցուրտ ձմեռով և զով ամառով, լեռնային և խիստ ցամաքային կլիմա:

- Տարեկան միջին ջերմաստիճանը **4.2** °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 32°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -33°C
- Քամու միջին տարեկան արագությունը **3.3**մ/վ :
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, կազմում է 114 սանտիմետր:

Հիդրոերկրաբանական տեսակետից Ուսումնասիրվող տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, մասամբ լանջային-գրավիտացիոն պրոցեսների զարգացման վրա ազդող կարևոր գործոններից են հանդիսանում ստորգետնյա ջրերը, որոնց ձևավորումն ու բնույթը, իրենց հերթին ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Ելնելով դրանից, հետազոտվող տարածքը կարելի է գնահատել, որպես գրունտային ջրերի սնման, կուտակման և բեռնաթափման շրջան: Ստորերկրյա ջրերը բեռնաթափվում են Սևանա լճի մեջ: Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 5. Օմ –ից ցածր հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:

Տարածքի ինժեներա-երկրաբանական կառուցվածքը Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման միջոցով, ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է երկու շերտեր: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ-1 Տարբեր ապարների թույլ գնդավորված ավազակավային գրունտներ, պինդ թանձրությամբ, շագանակագույն երանգի, տեղ-տեղ մանրախճի պարուբնակությամբ: Ժամանակակից դեյուվիալ-էյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-5- 82-ի (33գ) III կարգ է:


Շերտ-2 Հրաբխային ապարների թույլ գնդավորված խճաքարա-խճավազային նստվածքներ մոտ 5% բեկորանյութով, 10-15% խառնավազի, ավազակավի լրացումով: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀԻՊ IV-5-82-ի (13) IV կարգ է:


Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, ապահովելով գրունտերի միասեռությունը, որպես հիմնատակ առաջարկվում է

- շերտ 1-ը /ավազակավային գրունտներ /, որոնք սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 3-րդ կարգ են:
 - ✓ Դիմադրությունը $R_0=2.0կգ/սմ^2$
 - ✓ Ընկրկելիության գործակիցը $k_p=2200 տ/մ^3$
 - շերտ 2-ը / Հրաբխային ապարների թույլ գնդավորված խճաքարա-խճավազային նստվածքներ /, որոնք սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
 - ✓ Դիմադրությունը $R_0=3.0կգ/սմ^2$
 - ✓ Ընկրկելիության գործակիցը $k_p=4000 տ/մ^3$
- ✓ Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:




Համաձայն UNDP-ի Հայաստանում աղետների ռիսկի գնահատման իրավիճակի ուսումնասիրության՝ ներկայացվում է Հայաստանում 20 ակտիվ սողանքային տարածքների ուսումնասիրություններ: Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են սողանքային երևույթները:





7.3 Գլոբալ հորիզոնական ճառագայթումը Հայաստանի Հանրապետությունում:


Նկար 3





Նկարա


Գծապատկեր 2



Արևակայանը Սևանա լճից գտնվում է 7.6 կմ, Հրազդան գետից՝ 773մ (փակ հոսքով է), «Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ) Երկրաբանական հուշարձան՝ 4.7 կմ, միջպետական ավտոճանապարհից՝ 1907,7մ, տեղական ավտոճանապարհից՝ 82,6մ, մոտակա գործող արևակայանից՝ 1,2կմ, մոտակա երկաթգծից՝ 55 մ, մոտակա արտադրական շինությունից 50մ հեռավորությունների վրա:

Նախատեսվող գործունեության տարածքը մոտակա բնակավայրերից՝ Գագարինից՝ 443,7մ, Վարսերից՝ 2.912մ, Գեղամավանից՝ 1.565մ, Սևան քաղաքից՝ 5,120:

Գծապատկեր 3



Համաձայն «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» մասնագետների կողմից կատարված ուսումնասիրության, Սևան համայնքի վարչական սահմաններում «Սուլար Էներջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից արևային էներգակայան հիմնելու համար նախատեսված ընդհանուր տարածքը (կադաստրային ծածկագրեր՝ 05-004-0301-0013, 05-004-0302-0019) պատմա-մշակութային միավորների վրա հնարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ այստեղ պատմամշակութային միավորներ չեն փաստագրվել:

Տարածքում գերակշռում են տափաստանային, կարբոնատացված գորշ հողերը, Հողաբուսաշերտը բացակայում է, հիմնականում ավազակավային գրունտներ են::

Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված

բուսական և կենդանական տեսակները բացակայում են՝ պայմանավորված տարածքի արդեն մարդածին ազդեցության գոտում գտնվելու հանգամանքով:

8.Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Սևան խոշորացված համայնքի՝ Գագարին բնակավայրի վարչական տարածքում: Մարզը սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից սահմանակից է Ադրբեջանին: Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաք ավազանը: Մարզի գլխավոր լեռնաշղթաներն են՝ Գեղամա, Արեգունի, Սևանի Արևելյան Սևանի, Վարդենիսի, որտեղ առկա են տասնյակ հրաբխային կոներ՝ հատկապես ուշագրավ են Աժդահակ և Արմաղան հրաբուխները: Լեռների ձագարաձև խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ: Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող լանջերը զառիթափ են ու կտրտված, իսկ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են:

Նկար 5



Ռելիեֆը անհարթ բլրային է: Մակերևույթի ընդհանուր թեքությունը հարավ-արևելյան ուղղությամբ է: Տարածքը տափաստանային միջին լեռնային (1400-2300 ծ.մ.բ.), իրեն բնորոշ տափաստանային բուսականությամբ՝ հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ:

Սևանի ավազանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ավազանները տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Հրաբխային լավաների հոսքահետքերը, հասնելով մինչև լճի ավազանները՝ առաջացրել են արևմտյան փիի բազմաթիվ ծովախորշեր, հրվանդաններ, երբեմն հզոր քարաբեկորների ձևով՝ ընդհուպ մինչև լիճը: Տարածաշրջանում

ռելիեֆը բլրաշատ ավսեաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:


8. 1. Սեյսմիկա և երկրաբանություն

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելիեֆով, խորը ձորակներով: Ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են Հրազդան գետի վերին հոսանքի այլուվիալ նստվածքների և չորրորդական լավանների հետ:

Շրջանում մթնոլորտային տեղումներից առաջացած ջրահոսքերը ներծծվելով ապարների շեղքերով ու ծակոտիկներով, սեզոնային բնույթի աղբյուրների և ժամանակավոր հոսքերի տեսքով բեռնաթափվում են Սևանա լիճ:

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի նորմերի՝ ըստ սեյսմիկ հատկության տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:

Նկար 6



8. 2 Կլիմա և օդային ավազան

Կլիմա. Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը (15-17 օր ամսվա ընթացքում), ձմռանը չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության: Միջին ջերմաստիճանն հասնում է $+18^{\circ} + 20^{\circ}$: Տեղումները շատ

չեն՝ 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում մինչև 1000 մմ: Գեղարքունիքի մարզը բնութագրվում է շատ առատ արևափայլով, արևային օրերի քանակը կազմում է 300 օր:

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները Սևան քաղաքի համար՝ որպես խոշորացված համայնք:

Օդի ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 1

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
ք. Սևան	1937	-8,2	-7,4	-3,3	3,5	8,8	12,1	15,7	15,7	12,2	6,4	0,6	-5,5	4,2	-33	32

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	ըստ ամիսների												ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII					
ք. Սևան	81	80	77	72	73	72	70	68	65	69	76	82	74	75	53		

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3

Բնակավայրի անվանումը	<u>Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը</u>												տարեկան	Չյան ծածկույթը		
	ըստ ամիսների													տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
ք. Սևան	25	30	40	65	103	79	50	40	37	51	38	25	583	93	136	252
	21	26	26	52	46	45	43	74	44	59	50	26	74			

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհող մութությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությանը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												25	50	100
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					12	13	14
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Սևան ք.	805,5	հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4,2	3,3	25	24	26	28
			4,1	4,0	3,3	2,7	2,9	5,3	5,4	3,7							
		ապրիլ	5	9	23	8	4	16	28	7	20	3,3					
			3,9	3,7	3,2	2,5	3,8	6,3	5,5	3,4							
հուլիս	18	35	31	6	3	2	3	2	17	3,1							
	4,7	4,1	3,2	2,7	2,1	2,5	3,1	2,8									

Արեգակնային ճառագայթումը

Աղյուսակ 5

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Գումարային (ուղիղ և ցրված) ճառագայթումը հորիզոնական մակերևույթին անամպ երկնքի դեպքում, ՄՋ/մ²												
	ըստ ամիսների												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Սևան	356	453	700	818	987	978	995	917	695	547	375	311	8133

Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Սևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1937մ բարձրության վրա՝ ցուրտ կլիմայական գոտում: Քաղաքին բնորոշ են զով, քամոտ ամառը՝ օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C է, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0- 6.0 մ/վ:

Զմեռը՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, կազմում է 114 սանտիմետր:

Օդային ավազան. Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 45 օդերևութաբանական կայաններում՝ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել մարդու գործունեության, արդյունաբերության, գյուղատնտեսության, թափոնների բաց այրման, ավտոտրանսպորտի օգտագործման և բնական լեռնային փոշու տարածում, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետման հետևանքով: Աղտոտման հիմնական պատճառներն են՝ Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Մարզում չկան արտադրական ձեռնարկություններ, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են: Տարածքի հաշվարկով այս օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է հանրապետության միջինից շուրջ 6.3 անգամ:

Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է բարվոք վիճակում, այս ցուցանիշը միջին հանրապետական մեկ շնչի հաշվով ցուցանիշից փոքր է շուրջ 3 անգամ:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) համեմատությամբ:

Համաձայն 2022թ. ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տարեկան տեղեկագրի՝ Գեղարքունիքի մարզում 2021թ. անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակները կազմում են.

- Փոշի- 3303.11տ/տարի
- Ազոտի օքսիդ/առանց ենթօքսիդի/-124.24/տարի
- Ծծմբի երկօքսիդ-4.81տ/տարի

Ներկայացվում ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի արդյունքներն՝ ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված 2022թ. տարեկան ամփոփ տեղեկագրի քարտեզը:

Նկար 8



Մթնոլորտային օդի որակի արդյունքներն ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տարեկան ամփոփ և 2023թ. եռամսյակային տեղեկագրերի՝ օդի որակի կատարված դիտարկումների վերաբերյալ տեղեկատվությունում Գեղարքունիքի մարզի բնակավայրերը ներկայացված չեն: Ուստի ներկայացվում է Հայէկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի¹ ըստ բնակչության թվաքանակի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները²:

Ըստ «Էկոմոնիթորինգ» ձեռնարկ-ուղեցույցի՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Գագարին բնակավայրը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³

- Ագրոտի երկօքսիդը՝ 0.008 մգ/մ³
- Ածխածնի օքսիդը՝ 0.4 մգ/մ³:

8.3 Հողային ռեսուրսներ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև թեքություններով և հարթություններով: Տարածքում գերիշխում են լեռնային սևահողերը, անտառային դարչնագույն հողերը: Մարզի հարավային և արևմտյան հատվածների հողային ծածկույթը հիմնականում ներկայացված է սևահողերով և գետահովտադարավանդային հողերով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածները՝ մարգագետնատափաստանային, անտառային դարչնագույն և անտառային գորշ հողերով: Տարածաշրջանում լճային նստվածքների վրա ձևավորվել են գետահովտային, մարգագետնացած կոպճային և թույլ զարգացած ավազակոպճային հողագրունտների տիպերը: Ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները:

Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, էրոզիան, ափամերձ գոտու անտառների ջրածածկումը: Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում:

Նկար 9



Համաձայն Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ Սևանի տարածաշրջանում մեծ զանգվածներով հանդիպում են տիպիկ միջին հումուսային ալկալացված սևահողերը՝ լեռնային սևահողերի ենթատիպով:

Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային սևահողերն ունեն հումուսի մեծ պաշար՝ 0-60սմ խորության վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա:

Ռեակցիան վերին հորիզոններում թույլ հիմնային է, ներքևում՝ չեզոք:

Լեռնային սևահողերն օգտագործվում են մեծ մասամբ որպես խոտհարք և արոտավայր, իսկ տեղ-տեղ նաև որոշ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար (գարի, երկարամյա խոտեր):

Հանքաբանական կազմում գերակշռում են թեթև և միջին շրջանի միներալներ: Համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմերի մշակման ատլասի՝ Սևանի ավազանի գոտում առանձնացված է՝ երկու գոտի՝ Առաջին գոտու մեջ մտնում են Գեղարքունիքի մարզի մինչև 2000 մ բարձրությունների վրա տեղաբաշխված տարածքները: Հողածածկույթը կազմում են կարբոնատային և տիպիկ լեռնային սևահողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի միջին խտությունը տատանվում է 1,18-1,22գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,63-2,70 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 54,8- 55,1 % սահմաններում: Ոռոգման երկրորդ գոտին ներառում է Գեղարքունիքի մարզի այն տարածքները, որոնք տեղաբաշխված են 2000 մ-ից ավելի բարձրությունների վրա: Այս գոտում հանդիպում են կրագերծված սևահողերը և սևահողանման լեռնային մարգագետնատափաստանային հողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,17-1,21 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,52-2,59 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 53,2-53,6 % սահմաններում:

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները, գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտատնային իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն՝ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տարեկան ամփոփ և 2023թ. եռամսյակային տեղեկագրերում, Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: 2023 թվականի 3-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են միայն Գեղարքունիքի մարզի Զիլի հանքային դաշտում:

8.4. Ջրային ռեսուրսներ Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

Սևանա լիճ. Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր, ունի

կլիմայագոյացնող կարևոր նշանակությունը ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի 3 մարտի «ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 177-Ն որոշման՝ լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83,3 մ (Փոքր Սևան): Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75 %, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում՝ 75%:

Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձգագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ:

Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը՝ մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Մաքման կայանների նախատեսումը և ավիամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ավիամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական


ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Համաձայն կազմակերպության կողմից 2023թ. 3-րդ եռամսյակի տեղեկագրի՝ Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17, Սևանա լճի 4 դիտակետում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: 2023 թվականի հունիսի 30-ին լճի մակարդակը կազմել է 1900.54 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 20 սմ-ով: 2023 թվականի հուլիսի 1-ին Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.54 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 20 սմ-ով:

Շրջակա միջավայրի և մարդու առողջության համար կարևոր է ջրային ռեսուրսների որակական հատկանիշների պահպանումը: Ջրային ռեսուրսների աղտոտման պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, արդյունաբերության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը, հողահանդակներից անձրանաջրերի միջոցով տեղափոխված պեստիցիդները, վնասակար նյութերը և այլն: Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ՋՏԿ-ի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N75-Ն որոշման համաձայն(Հավելված 5), ընդհանրական գնահատման ցուցանիշի դասով՝ 1-5:

Սևանի կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակ

Նկար 9



ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի տեղեկագրի՝ 2023թ. 4-րդ եռամսյակում գետերում կատարված դիտարկումների արդյունքների՝ Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է

«վատ» (5-րդ դաս): Արվիա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 4-րդ եռամսյակի տեղեկագրի՝ Մեծ Սևանի ջրի որակը 0.5մ խորությունում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), դեկտեմբերին՝ 4-րդ դաս («անբավարար» որակ), 1020մ խորություններում՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ 3-րդ դասից («միջակ» որակ) 4-րդ դաս («անբավարար» որակ), դեկտեմբերին՝ 4-րդ դաս («անբավարար» որակ), 30մ խորությունում՝ հոկտեմբերին՝ 5-րդ դաս («վատ» որակ), նոյեմբերին և դեկտեմբերին՝ 4-րդ դաս («անբավարար» որակ): Փոքր Սևանի ջրի որակը 0.5մ խորությունում հոկտեմբերին գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), նոյեմբերին՝ 5-րդ դաս («վատ» որակ), դեկտեմբերին՝ 4-րդ դաս («անբավարար» որակ), 55մ խորությունում՝ հոկտեմբերին՝ 5-րդ դաս («վատ» որակ), նոյեմբերին և դեկտեմբերին՝ 4-րդ դաս («անբավարար» որակ), 80 մ խորությունում՝ երեք ամիսներին՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի, ինչպես նաև գյուղատնտեսական հոսքաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ: Ամբողջապես չմաքրված կեղտաջրերն իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:

Ներկայացվում է Սևանա լճի որակը 2023թ. 4-րդ եռամսյակի արդյունքներով:

*Աղյուսակ 12. Սևանա լճի ջրի որակը 2023 թվականի 4-րդ եռամսյակում
Շակտերներ*

Տեղայնություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 20մ խորություն	ԹԲՊ, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Լուծված թթվածին, նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, քլորիտառի ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
	Լուծված թթվածին, մանգան	5-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	ԹԲՊ, նիտրիտ իոն, բոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 30մ խորություն	Լուծված թթվածին, ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱԱ, քլորիտառի ֆոսֆոր	3-րդ	3-րդ

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դասը ստացվող կարգիմասկան բնութագրիչների	Ջրի կարգավիճակի բնորոշողական դասը ստացվող կարգիմասկան բնութագրիչների
Փորր Սևան, 55մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Լիտրիա իոն, ֆոսֆատ իոն, Լուծված թթվածին, մանգան	4-րդ	
		5-րդ	
Փորր Սևան, 70մ խորություն	ԹԲՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	6-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Լուծված թթվածին, Լիտրիա իոն, մանգան	5-րդ	
Փորր Սևան, 80մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	6-րդ
	Ֆոսֆատ իոն	4-րդ	
	Լուծված թթվածին, Լիտրիա իոն, մանգան	5-րդ	

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դասը ստացվող կարգիմասկան բնութագրիչների	Ջրի կարգավիճակի բնորոշողական դասը ստացվող կարգիմասկան բնութագրիչների
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 5մ խորություն	Ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 10մ խորություն	Բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	Ամոնիում իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 25մ խորություն	Ամոնիում իոն, բոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, Լիտրիա իոն, մանգան, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Լուծված թթվածին	4-րդ	
Փորր Սևան, 0.5մ խորություն	Ամոնիում իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Լիտրիա իոն	5-րդ	
Փորր Սևան, 5մ խորություն	Ամոնիում իոն, Լիտրիա իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փորր Սևան, 10մ խորություն	Ամոնիում իոն, Լիտրիա իոն, Երկաթ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փորր Սևան, 20մ խորություն	Բոր	3-րդ	3-րդ
Փորր Սևան, 30մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Լիտրիա իոն	4-րդ	
Փորր Սևան, 55մ խորություն	Լուծված թթվածին, ամոնիում իոն, Լիտրիա իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Լիտրիա իոն, մանգան	4-րդ	
Փորր Սևան, 70մ խորություն	ԹԲՊ, Երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Լիտրիա իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
	Լուծված թթվածին, մանգան, ՀԱԱ	5-րդ	
Փորր Սևան, 80մ խորություն	Ամոնիում իոն, Լիտրիա իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	5-րդ
	Լուծված թթվածին, մանգան	5-րդ	

Դեկտեմբեր

Տեղադրություն, խորություն	Ջրի ռառնից ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան, 0,5մ խորություն	ԹԲՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, մանգան, էրկաթ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	ԹԲՊ, էրկաթ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹԲՊ, մանգան, էրկաթ, բոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹԲՊ, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան, 0,5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, էրկաթ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	ԹԲՊ, ամոնիում իոն, էրկաթ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան, 10մ խորություն	Ամոնիում իոն, մանգան, էրկաթ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 20մ խորություն	Մանգան, էրկաթ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 30մ խորություն	ԹԲՊ, մանգան, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹԲՊ, էրկաթ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան, 70մ խորություն	ԹԲՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան, 80մ խորություն	ԹԲՊ, ֆոսֆատ իոն, էրկաթ, բոր, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Անոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տպագրված 2023թ. 4-րդ եռամսյակի տեղեկագրերի՝ կատարվել են Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում. այդ թվում՝ 12 գետային. 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Համաձայն 4-րդ եռամսյակի տեղեկագրի ներկայացվում է դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակում:

Գեա	Դիտակետ	Միջին ամսական ելքեր մ՝/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	2.56	3.33	77	2.10	3.44	61	2.08	3.10	67
Հրազդան	Արգել	2.19	3.73	59	2.12	3.69	58	2.01	3.13	64
Հրազդան	Երևան	2.65	3.32	80	4.40	3.94	112	5.51	5.93	93
Մարմարիկ	Հանքավան	0.57	0.48	118	0.64	0.51	125	0.73	0.45	162
Մարմարիկ	Աղավնաձոր	1.65	1.48	111	1.28	1.50	85	1.28	1.33	96
Քասախ	Վարդենիս	0.30	0.53	57	0.34	0.55	63	0.34	0.50	69
Քասախ	Աշտարակ	3.72	2.75	135	2.93	2.93	100	2.86	2.66	107

8.5 Կենսաբազմազանություն

Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Սևանա լճի և տարածքի կենսաբազմազանության պահպանման նպատակով ստեղծվել է «Սևան»ԱՊ-ը: Տարածաշրջանը լեռնային է և բնորոշվում է լանդշաֆտների ուղղաձիգ գոտիականությամբ՝ ցածր և միջին լեռնաանտառային, մարգագետնա-տափաստանային, մերձալպյան, ալպյան: Բնական անտառները՝ գիհի և կաղնի ծառատեսակներով ոչ մեծ կղզյակներով տեղակայված են Արեգունյաց լեռնաշղթայի ուղղաձիգ լանջերի վրա, իսկ առանձին ծառեր և ծառերի փոքր խմբեր հանդիպում են նաև լճափի այլ հատվածներում:

ՀՀ Լանդշաֆտային գոտիները



Քուսական աշխարհ: Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000 մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500 մ: Գոտին տափաստանային է և գորշ կարբոնատային, անտառային: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաճիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է:

Մարզի հիմնական անտառ կազմող ծառատեսակները հանդիսանում են սոճին, եղևին, բարդին, ուռենին, թեղին, հացենին, ակացիան, փշատենին և այլ փշատերև ու սաղարթավոր ծառատեսակներ: Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ):

Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատներն ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոդ թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (Juniperus depressa) և այլն: Թփատեսակներից ամենամեծ մակերեսները զբաղեցնում է չիչխանը:



Նկար 11.

Տարածված են նաև արոսենու (արոսենի Կուզնեցովի (*Sqrbus kuznetsqvii*), արոսենի Հայաստանի (*S.hajastana*), արոսենի հունական (*S.graeca*)), մասրենու (*Rqsa spinqsissima*, *R.canina*), ասպիրակի (*Spiraea crenata*), ալոճենու (*Crataegus qrientalis*), ուռենու (*Salix caprea*) և այլ համակեցություններ:

Բնական բուսածածկույթին փոխարինվում են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: (UNDP): Տարածաշրջանում կան անոթավոր բույսերի 1587 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100-ը՝ ուտելի են: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը՝ թունավոր: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (*Festuca sp.*), որումի (*Lolium sp.*) 95.1 և դաշտավուկների (*Poa sp.*) տարբեր տեսակներ:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ՝ հարուստ և բազմազան: Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստանների բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ:

Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1.600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի) այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 23 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Դրանք են Լրձուն Սևանի, Ոզնաթուփ Գաբրիելյանի և այլն: Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային /*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albobvii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (I.) Keng, *Stipa*

capillata L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsa* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/:

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ *Cousinia fedorovii* Takht, Լրջուն Սևանի-*Isatis sevangensis* N. Busch, Թրաշուշան հայաստանյան-*Gladiolus hajastanicus* Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - *Iris elegantissima* Sosn, Վիշապագլուխ ավստրիական - *Dracocephalum austriacum* L., Գառնատվույտ հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk.:



Նկար 12. Վիշապագլուխ ավստրիական



Նկար 13. Գառնատվույտ հայկական

Նախատեսվող արևային կայանի և ՕԳ-ի, ենթակայանի տարածքներում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բացակայում են, տարածքը գտնվում է ակտիվ գործունեության գոտում, հարակից տարածքում առկա են արևակայաններ, ենթակառուցվածքներ:

Կենդանական աշխարհ: Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով՝ 44 տեսակ կաթնասուններ՝ գիշատիչներ, միջատակերներ, կրծողներ, չղջիկներ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձկներ:

Կաթնասունները պատկանում են հետևյալ կարգերին.

- ❖ Միջատակերներ (Insectivora),
- ❖ Կրծողներ (Rodentia),
- ❖ Նապաստակներ (Logomorpha),
- ❖ Չղջիկներ (Chiroptera),
- ❖ Գիշատիչներ (Carnivora),
- ❖ Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Համաձայն «Գեոարքունիք 1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի՝ մարզի տարածքում հաշվարկվում են 43 տեսակի փափկամարմիններ, 639 տեսակի հողվածոտանիներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-*Salmonidae*, սիգազգի *Coregonidae* և

ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (Sevan Trout-Salmo ischchan Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (S. ischchan aestivalis), Ձմեռային բախտակ (S. ischchan ischchan), Գեղարքունի (S. ischchan gegarkuni), Բոջակ (S. ischchan danilewskii): Սիզազգիների ընտանիքի ներկայացուցիչը կլիմայավարժեցված սիզն է (Whitefish-Coregonus lavaretus): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (Khrami carp Varicorhinus capoeta sevangi) և Սևանի բեղուն (Sevan 17 barble-Barbus goktschaicus): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (Crucian carp-Carassius auratus gibelio), որը պատահաբար լիճ է ներթափանցել արարատյան դաշտի ջրային համակարգերից:

Տարածաշրջանում հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ՝ Ցատկողներ (Salientia) կարգին պատկանող՝ Լճագորտ (Rana ridibunda), Փոքրասիական գորտ (Rana macrocnemis), Կանաչ դոդոշ (Bufo viridis), Շելկովնիկովի ծառագորտ (H.a.shelkovnikovi):

Սողուններից հանդիպում են՝ Սպիտակափոր ժայռային, Նաիրյան ժայռային, Ռոստոմբեկովի ժայռային, Հայկական ժայռային, Վալենտինի ժայռային մողեսները, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դոդոշը, լճագորտը, փոքրասիական գորտը և շելկովնիկի ծառագորտը[11]:

Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի իջեցումը, ինչպես նաև ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների վրա:

Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններ՝ ձկնկուլ (Pelecaniformes) - 4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (Ciconiiformes) -11 տեսակ, ֆլամինգո (Phoenicopteriformes) - 1 տեսակ, հոպոպ, սագեր, բադեր և այլն: Թռչուններից 48 տեսակը բնադրող են: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է էկոլոգիապես անկայուն: Պարկում մեծ պոպուլյացիաներով հանդիպում են՝ մեծ քնամուկը (Glis glis), պարսկական սկյուռը (Sciurus persicus), անտառային մուկը (Apodemus sylvaticus), այծյամը (Capreolus capreolus), լայնականջ ոզնին (Tadarida teniotis) և այլն:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են՝ Կաթնասունների 6 տեսակ, (գործ արջը, ջրասամույրը, անտառային կատուն, բեզոարյան այծ-Capra aegagrus Erleben և այլն), սողուններից 2 տեսակ(խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-Eremias arguta transcaucasica Darevsky, 1953) և փոքրասիական մողեսները- Darevskia rostombekovi Darevsky 1957), 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-Larus armenicus), վարդագույն հավալուսն - Pelecanus onocrotalus Linnaeus, ձկնկուլը և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - Oxyura leucocephala Scopoli, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղուն (Barbus goktschaicus Kessler) և Սևանի կողակը (Varicorhinus capoeta sevangi, Filippi) հոդվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռը - Maculinea arion zara Jachontov, Մթնշաղային կապտաթիթեռ - Maculinea nausithous, Անտեսված կապտաթիթեռ - Agrodiaetus neglectus

Dantchenko, Նինայի կապտաթիթեռ - *Agrodiaetus ninae* Forster, Թուրքական կապտաթիթեռ - *Agrodiaetus turcicus* Koçak, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում:



Նկար 14. Հայկական որոռ



Նկար 15. Կապտաթիթեռ

Գագարին բնակավայրում հանդիպում են շնագայլ, նապաստակ, լուսան, թխակապույտ աղավնի, արծաթափայլ որոռ և անտառային կատու:

Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները և կենդանիների բնադրավայրերը բացակայում են:

8.6 Բնության հատուկ պահպանվող տարածքներ Մարզի բնության հատուկ պահպանվող տարածք է «Սևան» ազգային պարկը՝ 147.455 հա մակերեսով: Այն գտնվում է շրջակա միջավայրի նախարարության կառավարման ներքո՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործառույթների միջոցով: Այն բաժանվում է չորս՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրացիոն և տնտեսական գոտիների: Պարկի տարածքում են գտնվում «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլլի» և «Արտանիշի» արգելոցները՝ 7464 հա ընդհանուր մակերեսով, որից ցամաքայինը կազմում է 4289հա, ջրայինը՝ 3175հա: Այստեղ է գտնվում նաև երկու՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրերն՝ ընդհանուր 2652հա մակերեսով:

Գործունեության տարածքը գտնվում է «Սևան»ԱՊ-ից մոտ 7 կմ հեռավորության վրա:

8.7 Պատմամշակութային հուշարձաններ

Սևան համայնքում կան բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ: Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ սահմանվում է Սևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ «ՄԵԾԵՓ»	Ք.ա. 3-1 հազ.	քաղաքից 0.6 կմ հս-ամ, Գոմաձոր թաղամասում, Մեծեկի սարի գագաթին, հեռուստաաշտարակի մոտ	<	1
2			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	9-20 դդ.	քաղաքի հվ-աե մասում, Ցամաքաբերդ թաղամասի եզրին, երկաթգծից ձախ	S	2: Ենթակայությունը ներկայացված է 10 հուշարձան (2.1-2.10)
3			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	9-20 դդ.	քաղաքի հս-ամ մասում, Գոմաձոր թաղամասի հս եզրին, գործող գերեզմանոցի հվ մասում	S	3
4			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	11-19 դդ.	քաղաքի հս-աե մասում, Ցամաքաբերդի Սբ. Գևորգ եկեղեցուց հվ	S	7.3: Ենթակայությունը ներկայացված է 3 հուշարձան (7.3.1-7.3.3)
5			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքի հս եզրին, Ցամաքաբերդ թաղամասում, «Սևան» հյուրանոցից 300 մ աե	<	4
6			ԵԿԵՂԵՑԻ	9-10 դդ.	Գոմաձոր թաղամասում	S	ավերված է (5)
	6.1		Գերեզմանոց	10-17 դդ.	եկեղեցուց աե	S	5.1: Ենթակայությունը ներկայացված է 9 հուշարձան (5.1.1-5.1.9)
7			ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	քաղաքի հս-աե մասում, Ցամաքաբերդ թաղամասում, «Սևան» հանգստյան տան տարածքում	<	8
8			ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	քաղաքի հս-աե մասում, Ցամաքաբերդ թաղամասում, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին	<	9
9			ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	քաղաքի հս-աե մասում, Ցամաքաբերդ	<	10

				թաղամասում, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին		
10		ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	քաղաքի հս-աե մասում, Ցամաքաբերդ թաղամասում, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին	<	11
11		ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	քաղաքի հս-աե մասում, Ցամաքաբերդ թաղամասում, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին	<	12
12		ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	քաղաքի հս-աե մասում, Ցամաքաբերդ թաղամասում, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին	<	13
13		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀԿԱԾՆԵՐԻՆ	1980 թ.	քաղաքի մեջ, Գոմաձոր թաղամասում	S	14
14		ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	16 դ.	քաղաքի ամ մասում, Գոմաձոր թաղամասում, Մեծեվի սարի աե լանջին	S	15: Ենթակայությունը ներկայացված է 5 հուշարձան (15.1-15.5)
15		ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	16-17 դդ.	քաղաքի հս մասում, Ցամաքաբերդ թաղամասում	S	16

Գործունեության տարածքը չի առնչվում նշված պատմամշակութային հուշարձանների հետ:

8.8 Բնության հուշարձաններ

Գեղարքունիքի մարզում և Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը՝ ջրագրական և 1-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ:

Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, առանձնապես ուշագրավ բնական հուշարձաններ, խառնարանային լճեր, խարամային կոներ, ընդարձակ քարային ծովեր:

Երկարաբանական

21.	«Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
22.	«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
23.	«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արևելյան ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
24.	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
25.	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
26.	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ
27.	«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ
	Ջրաերկրաբանական	
5.	«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
6.	«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
7.	«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
8.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
9.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
10.	«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա
	Ջրագրական	
11.	«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
	Կենսաբանական	
4.	«Ենթալայան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ

Գեղարքունիքի մարզ, Սևանի լեռնաշղթայի լանջերի (Շորժա գյուղի շրջակայքում) առկա են նաև «Օֆիուլիտային ապարների» մերկացումները:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան պատմաշակութային, բնության հուշարձաններ:

8.9 Սոցիալ-տնտեսական

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի կայք էջի՝ Գեղարքունիքի մարզի տարածքը կազմում է 5351քառ.կմ, ներառում է 5 քաղաքներ և 93 գյուղական բնակավայրեր: Մարզի տարածքում է գտնվում Սևանա լիճը և «Սևան»ԱՊ-ը: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: 2022թ. տարեսկզբի դրությամբ մարզի բնակչությունը կազմում է 227,8հազ. մարդ:

Տարածքը Territory	5 351 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	18.0
Համայնքներ, 2023թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2023	5
Քաղաքներ Towns	5
Գյուղեր Villages	93
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	228.7 հազ. մարդ/ ths. person
<i>այդ թվում՝</i> <i>including:</i>	
քաղաքային urban	65.9 հազ. մարդ/ ths. person
գյուղական rural	162.8 հազ. մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,% Share of marz population in the total population of the Republic of Armenia 2022, %	7.7
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,% Share of urban population size 2022, %	28.8
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	345 144.8 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	81 431.4 հա/ ha

Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.6 %,
- գյուղատնտեսություն 11.7 %,
- շինարարություն 4.6 %,
- մանրածախ առևտուր 2.3 %,
- ծառայություններ 0.9 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Մարզը հանդիսանում է ՀՀ-ում թարմ ձկան հիմնական մատակարարը: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզի տարածքով անցնում է Երևան-ՍևանԴիլիջան հանրապետական նշանակության մայրուղին:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Սևան խոշորացված համայնքի՝ Գագարին թաղամասի տարածքում:

Ք. Սևան. համայնքը գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին՝ լճից 200-250մ հեռավորության, ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա: Սևան քաղաքը Երևանից գտնվում է 66կմ հեռավորության վրա: 2023թ. տարեսկզբի տվյալներով ունի 18.8հազ. բնակիչ:

Քաղաքի զարգացման հիմնական ուղղությունը թեթև արդյունաբերությունը և զբոսաշրջությունն է: Սևան համայնքը զբաղեցնում է 1784.68հա հողատարածք: Ռեյլեֆը հիմնականում հարթ է, կտրտված հեղեղատներով, ունի գրունտային ջրերի բարձր մակարդակ: Տարածված են թույլ անկայուն լճային կարբոնատային ավազները, կավեր, ավազակավեր, խճեր:

Կլիման մեղմ է, բարձր լեռնային՝ չափավոր տաք ամառ և չափավոր սառը, քամոտ ձմեռ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է -12,5°C, հուլիսին՝ +22,5°C: Տարվա ընթացքում գերիշխում են հյուսիսային, հարավ-արևմտյան և արևմտյան ուղղության քամիները: Քաղաքի օդային ավազան արտանետումների հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը, ջեռուցման համակարգերը: Մարզը գազիֆիկացված է:

Գագարին բնակավայր գտնվում է Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքում, հիմնադրվել է 1955թ. -ին, ծովի մակարդակից 1900մ բարձրության վրա, բնակչությունը 1379 մարդ: Տեղակայված է Հրազդան գետի ձախ ափին, բնակավայրում կա երկաթուղային կայան՝ Ծաղկունք: Տարածքը 145 հա, ռեկրեացիոն գոտին 460հա, Սևան քաղաքը և Գագարին բնակավայրը կոյուղացված են:

9. Նախատեսվող գործունեության բնութագրերը

Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում համաձայն տրված Լիցենզիայի նախատեսվում է կառուցել 10200կՎտ հզորության արևակայան: Համաձայն տրված տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է կառուցել 10000կՎԱ հզորության 110/35կՎ լարման և համապատասխան հզորության 35/0,8 կՎ ենթակայաններ: 110/35կՎ ենթակայանը միացնել «Ախթամար» 110կՎ ՕԳ-ի՝ «Գագարին» ենթակայանի ճյուղավորման վերջին հենարանից Գ 9826 110/10կվ ենթակայանը սնող 110կՎ լարման օդային գծի N4 խարսխային հենարանին, կառուցելով 40մ երկարության կտրվածքի օդային գիծ: Իսկ 35/08 կՎ ենթակայանը միացնել 110/35կՎ ենթակայանի 35կՎ ԲՄ-ին կառուցելով 255մ երկարության 35 կՎ մալուխային գիծ:

Նախատեսվող արևային կայանի նպատակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

9.1 Արևային կայան: Նախատեսվում է 9,240 Մվտ դրվածքային հզորությամբ կայան (որը փոխակերպիչների ընհանուր գումարն է, ցանցին այս թվից ավել չի մատակարարվելու), ինչպես նաև 9.658ՄՎտՊ պիկային հզորություն, որը վահանակների ընդհանուր պիկային հզորությունն է, Ենթակայանի տրանսֆորմատորի հզորությունը 30 աստիճան ջերմաստիճանում 9.8ՄՎԱ է: Տեխնիկական պայմանում կարող է հզորությունը ավելի շատ լինել, բայց քիչ չի կարող լինել: Արևային ֆոտովոլտային արևակայանի վահանակները տեղադրվելու են երկու հողամասերում: Առաջին հողում 6942, երկրորդում 9568 ընդհանուր 6942+9568=16510: ՖՎ վահանակների զբաղեցրած մակերեսը կազմելու է 5.2 հա: Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 16510 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով յուրաքանչյուրը 575Վտ առավելագույն հզորությամբ: 27 հատ՝ 330կՎտ էլքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի էլուստների մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Արևակայանի կառուցման համար ընտրվել են JKM575N-72HL4-BDV ֆիբրային արտադրության 22.26% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 575Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մեկ մոդուլի չափսերը՝ 2278x1134x35մմ: Փոխակերպիչները Huawei արտադրության են, մոդելը՝ SUN2000-330KTL-H2

330կՎտ էլքային հզորության, ցանցային տեսակի, 6 MPPT (Maximal Power Point Tracker) 28 մուտքերով: Արևային էլեկտրակայանը տեղադրվելու է ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով՝ բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 30° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է, (ՀՀ ՇՆ II-7.01-2011):

9.2 Տրանսֆորմատորային ենթակայաններ: Նախատեսվում է կառուցել 2 հատ տրանսֆորմատորային ենթակայան: Արևային էլեկտրակայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներ, որոնք ամրացվում են գետնին 1,2 մ բարձրությամբ երկաթբետոնյա հիմքերով: Ենթակայանները գտնվում են <<Սոլար Էներջի Գրուպ>> ՍՊԸ-ին պատկանող տարածքում, ինչպես նաև մալուխագծերը նույնպես մոնտաժվում են այդ տարածքում: Այդ պատճառով հողահատկացում չի պահանջվում: Ենթակայանները նախատեսվում է տեղադրել 7-րդ հողամասում:

N1 ենթակայան Տեխնիկատնտեսական լուծումներից էլնելով՝ նախագծով նախատեսվում է 1 հատ 9000կՎա հզորությամբ 35/0,8կՎ լարման ենթակայան, որում գեներացվում է արևային կայանի արտադրանքը, 35կՎ մալուխագծով տեղափոխվում, միանում 110/35կՎ նոր տեղադրվող ենթակայանին, որից 110կՎ ՕԳ-ով միանում 110կՎ <<Ճ. Աղթամար>> օղային գծի N2 հենարանին: Ենթակայանի մակերեսը կազմում է 75,6քմ:

Ենթակայանի կառուցման համար նախատեսվում է տեղադրել 9000ԿՎԱ հզորության, 35/0,8կՎ լարման տրանսֆորմատորային լրակազմ JUPITER-9000K-H1 տիպի:

Հաշվառքն իրականացվում է N2 ենթակայանում:

35/0,8կՎ լարման, 9000 կՎԱ հզորության տրանսֆորմատորային լրակազմ JUPITER-6000K-H1 (Հավելված 1)

JUPITER-6000K-H1 լրակազմը բաղկացած է երեք բաժիններից՝

- Ցածր լարման բաժին, որում գտնվում են 0,8կՎ վահանները,
- Տրանսֆորմատորի բաժին, որում տեղադրված է 9000 կՎԱ հզորության, 35/0,8կՎ լարման յուղային երկփաթույթ տրանսֆորմատոր
- Բարձր լարման բաժին, որում տեղադրված են 35կՎ անջատիչներ և 35կՎ գերլարման սահմանափակիչներ:

Նաև կոնտեյներում ներկառուցված է 5կՎ հզորությամբ սեփական կարիքների չոր տրանսֆորմատոր:

Կոնտեյները տեղադրվում է ե/բ մոնոլիտ հիմքի վրա: Տրանսֆորմատորի բաժնի տակ նախատեսված է յուղընդունիչներ՝ 15մ³ ընդհանուր ծավալով, համաձայն ПУЭ-7 4.2.69 կետի պահանջների:

Կոնտեյներից էլքն իրականացվում է այլումինե հաղորդալարերով АПвП 3x70մմ² տիպի եռաջիղ մալուխով: Մալուխը մոնտաժվում է խրամուղով մինչև N2 երթակայան: Ուղեգծի ամբողջ երկայնքով մալուխները մոնտաժվում են սեփական տարածքով:

Արևային կայանի սեփական կարիքների ապահովման համար լրակազմի մեջ տեղադրված 5կՎԱ հզորությամբ տրանսֆորմատորը բավարար չէ: Սեփական կարիքներն ամբողջությամբ բավարարելու համար, ենթակայանի տարածքում նախագծով նախատեսված է ТМГ տիպի

0.8/0.4կՎ լարման 25կՎԱ հզորությամբ տրանսֆորմատորի տեղադրում: Այդ նպատակով կոնտեյնների կողքը տեղադրվում է սեփական կարիքների պահարան, որի մեջ տեղադրվում է վերը նշված տրանսֆորմատորը: Պահարանում նաև տեղադրվում է 40Ա մուտքային ավտոմատ անջատիչ և երկու էլքային խմբի համար նախատեսված վահանակ: Տրանսֆորմատորի սնումն իրականացվում է լրակազմի 0,8կՎ հաղորդադողից՝ ABBF-0.66 4x16մմ² մալուխով:

Ենթակայանի հողանցում և շանթապաշտպանություն Հողանցման արտաքին կոնտուրը իրականացվում է 40x4 շերտապողպատով, որը տեղադրվում է հողում 0,7մ խորությամբ և ուղղահայաց էլեկտրոդներով (անկյունակներ) 50x50x5մմ՝ 2մ երկարությամբ:

Բոլոր միացումներն իրականացվում են եռակցումով: Բոլոր մետաղական կոնստրուկցիաներն անհրաժեշտ է միացնել հողանցման կոնտուրին:

Հողանցման սարքվածքի դիմադրությունը տարվա յուրաքանչյուր պահին չպետք է գերազանցի 4 Օհմ-ը:

Կայծակի ուղիղ հարվածներից ենթակայանի պաշտպանությունը իրականացվում է 1 հատ CB-105 տիպի ե/բ հենասյան վրա տեղադրված շանթարգելով: Ընդհանուր բարձրությունը 13մ է:

Ենթակայանի լուսավորություն. Սույն նախագծով նախատեսված է արտաքին լուսավորություն: Շանթապաշտպանության ե/բ հենասյան վրա ամրանում է 2 հատ 200Վտ հզորությամբ LED լուսարձակներ: Լուսարձակները սնվում են 220Վ լարման ցանցից:

Լուսարձակների սնումն իրականացվում է ՕՊԲ-6 տիպի լուսավորության վահանակից՝ պղնձե մալուխներով:

N2 ենթակայան Ենթակայանի սնումը նախատեսվում է իրականացնել մեկ 110կՎ օդային գծով: 110կՎ ԲԲՄ-ն նախատեսված է բաց տիպի: Հաղորդադրավորումը իրականացվում է AC-70/11 տիպի պողպատայումինե հաղորդալարով:

Ենթակայանում տեղադրվում են 110/35կՎ լարման 1 հատ եռաֆազ երկփաթույթ տրանսֆորմատոր, 10000կՎԱ հզորության:

ԲԲՄ-ում նախատեսվում է տեղադրել հետևյալ 110կՎ սարքավորումները՝

- Դրսի տեղադրման էլեգազային անջատիչ – 1 լրակազմ:
- Եռաբևեռ բաժանիչ երկու հողանցման դանակով, էլ. շարժիչային շարժաբերով – 1 լրակազմ:
- Հոսանքի տրանսֆորմատոր – 3 հատ:
- Ունակային լարման տրանսֆորմատոր – 3 հատ:
- Գերլարման սահմանափակիչ գրանցասարքով – 3 հատ:
 - Հողանցիչ միաբևեռ ձեռքի շարժաբերով – 1 հատ:

Համաձայն JUPITER-9000K-H1 ենթակայանի և ինվերտորի գործարանային փաստաթղթերի 30°C ջերմաստիճանի դեպքում ենթակայանի հզորությունը 9900կՎԱ է, իսկ 40°C-ի դեպքում 9000կՎԱ է: Արևային կայանի դրվածքային հզորությունը 30°C-ի դեպքում 9,8 ՄՎԱ է: Ջերմաստիճանի փոփոխություններին համահունչ փոխվում է նաև ինվերտորների հզորությունը և տրանսֆորմատորի հզորությունը, այնպես, որ յուրաքանչյուր պահին տրանսֆորմատորը չի գերբեռնվում: Տեխնիկական պայմանով երկրորդ ենթակայանը նախատեսվում է տեղադրել 10000կՎա հզորության, 110/35կՎ լարման, որն ըստ տրանսֆորմատորների ստանդարտի ամենամոտն է մեր հզորությանը և լիովին բավարարում է բեռին:

N1 9000ԿՎԱ հզորության, 35/0,8կՎ լարման տրասֆորմատորային լրակազմ JUPITER-9000K-H1 – 10,5x7.2մ /75,6քմ/

	X	Y
1	8488662.6535	4490574.2992
2	8488667.7422	4490579.3929
3	8488675.1726	4490571.9741
4	8488670.0855	4490566.8789

N2 10000կՎԱ հզորության 110/35կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան - 32.45x15.5մ /502,975քմ/

	X	Y
1	8488629.2757	4490319.1378
2	8488650.7092	4490343.7989
3	8488662.7093	4490333.3690
4	8488641.2767	4490308.7076

Ենթակայանի լուսավորություն Սույն նախագծով նախատեսված է 110կՎ ԲԲՍ-ի տարածքի լուսավորություն: 110կՎ ԲԲՍ-ում տեղադրվում են LED լուսարձակներ: Լուսարձակները տեղադրվում են 110կՎ պորտալի վրա, առանձին կանգնած շանթարգելի վրա, ցանկապատի կանգնակների վրա և ՓԲՍ-0,8կՎ արտակին պատերին: ՓԲՍ-0,8կՎ լուսավորությունը իրականացվում է LED լուսատուներով LZ.OPL ECO LED 1200 TH 5000K տիպի. Լուսարձակների սնուցումն իրականացվում է ՕՍԼԸ-6 տիպի լուսավորության վահանակից՝ պղնձե մալուխներով:

Ենթակայանում աշխատանքային լարումն ընդունված է ~220Վ:

Ենթակայանի հողանցում Ենթակայանի հողանցման համակարգը բաղկացած է ենթակայանի արտաքին կոնտուրից, ինչպես նաև ՓԲՍ-0,8կՎ շենքի ներքին կոնտուրից, որոնք միացված են իրար:

Հողանցման կոնտուրը իրականացվում է 50x5 շերտապողպատով, որը տեղադրվում է հողում 0,5մ խորությամբ և ուղղահայաց էլեկտրոդներով (անկյունակներ) 50x50x5մմ՝ 2մ երկարությամբ: ՓԲՍ-0,8կՎ շենքի ներքին կոնտուրը իրականացվում է 25x4 շերտապողպատով:

Բոլոր միացումներն իրականացվում են եռակցումով: Բոլոր մետաղական կոնստրուկցիաներն անհրաժեշտ է միացնել հողանցման կոնտուրին:

Հողանցման սարքվածքի դիմադրությունը տարվա յուրաքանչյուր պահին չպետք է գերազանցի 0,5 Օհմ-ը:

Ենթակայանի շանթապաշտպանություն 110կՎ ԲԲՍ-ում տեղադրված սարքավորումների կայծակի հարվածներից պաշտպանության համար նախագծով նախատեսվում է տեղադրել 1 հատ շանթարգել մուտքային պորտալի վրա և 1 հատ առանձին կանգնած շանթարգելով՝ 15մ բարձրությամբ: Ենթակայանի ամբողջ տարածքը մտնում է շանթարգելների պաշտպանիչ գոտու մեջ:

Մալուխագիծ: N1 – N2 ենթակայանների միջև հասված - Նախագծվող 35կՎ ՄԳ-ի երկարությունը 255մ է որից 15մ կոնստրուկցիայով, 240մ խրամուղով:

35կՎ ՄԳ-ի մալուխն ընտրվել է АПвПы 3x95/35մմ2 կտրվածքի:

Մալուխագիծը N1 ենթակայանից մոնտաժվում է խրամուղով մինչև N2 ենթակայան, մոնտաժվում մետաղական կոնստրուկցիայով և արտաքին տեղադրման ջերմանաստեղծվող ծայրային կցորդիչով միանում է հաղորդադրողերին:

Մալուխը անցկացվում է հողում, ավազե լցվածքով խրամուղու մեջ և պաշտպանվում է/բ սալերով: Մալուխի անցկացման խորությունը 1մ է: Մալուխը տեղադրվում է օձաձև, ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար:

Մալուխը խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ պատրաստվում է 100մմ հաստությամբ ավազե անկողին, այնուհետև տեղադրվում է մալուխը և ծածկվում է 150մմ ավազե շերտով, որից հետո տեղադրվում է է/բ սալ և խրամուղին լցվում է ավազակոպիճով:

Ավտոճանապարհները հատելիս մալուխը անցկացվում է պոլիէթիլենային խողովակի մեջ անցկացված:

Է/բ սալերի դասավորությունը խրամուղում (կախված խրամուղու հիմքի չափերից) կատարվում է համաձայն A5-92 տիպարային նախագծի №A5-92-15 թերթի աղյուսակ №2-ի:

N2 ենթակայան – «Ճ. Ախթամար» օդային գծի N2 հենարանի հատված: Նախագծվող 110կՎ ՕԳ-ի երկարությունը 40մ է:

110կՎ ՕԳ-ի հաղորդալարն ընտրվել է AC-95/16մմ2 կտրվածքի հաղորդալարերով:

110կՎ օդային գիծը N2 ենթակայանի պորտալից մեկ թռիչքով՝ 40մ, միանում է գոյություն ունեցող 110կՎ ՕԳ հենարանին: Նոր 110կՎ հենարան չի տեղադրվում:

Կրակմարիչեր և հրդեհաշիջման վահանակ, Տարածքում նախատեսվում են կրակմարիչեր և հրդեհաշիջման վահանակ:

9.3 Օպերատորական շինություն: Տարածքում կառուցվելու է 25մ² /7 մ² պահեստ +18մ²/ մակերեսով օպերատորական շինություն՝ ներքին հարդարումով: Մոնիթորինգի նպատակով տեղադրվելու են հեռուստացույց, մոնիտոր՝ անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար:

9.4 Պահեստային շինություն. Տարածքում նախատեսվում է պահեստային շինություն՝ 7 մ² չափերի մետաղական վազոն-տնակ, խոտանված մասերի և գործածությունից դուրս եկած վահանակների ժամանակավոր պահման համար:

9.5 Արտաքին լուսավորություն և տեսահսկում: Նախատեսված է նաև տարածքի տեսահսկում արտաքին տեղադրման տեսախցիկներով, որոնք տեղադրվում են լուսավորության հենասյուների վրա:

9.6 Ցանկապատում. Կայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվում է՝ 2 մ բարձրության, 2030x2700x25մմ չափերի մետաղական ցանկապատով՝ նախատեսելով մեքենաների 2 դարպասային մուտք (գլխավոր և օժանդակ):


Ենթակայանի տարածքը ցանկապատվելու է 2 բարձրության ցինկապատ մետաղալարով՝ 50x50x2.5մմ չափերի՝ բետոնյա հիմքերով:

10. Շինարարության փուլ

Շինհրապարակ. Գործունեության իրականացման համար կազմակերպվելու շինհրապարակ՝ 2 հատ, որն ամբողջ գործունեության տարածքն է, որից մոտ 1000 քառ մ. արտադրական տարածքն է:

Շինհրապարակների կազմակերպման հատակագիծ

Գծապատկեր 4



- 13-հարկան բնակարանային տարածք (13-հատ)
- Ճանապարհ
- 5-հարկան ավտոմեքենաների կայան (5-հատ)
- 5-հարկան ավտոմեքենաների կայան (5-հատ)
- 3-հարկան ավտոմեքենաների կայան (3-հատ)
- 5-հարկան ավտոմեքենաների կայան (5-հատ)
- 5-հարկան ավտոմեքենաների կայան (5-հատ)
- 5-հարկան ավտոմեքենաների կայան (5-հատ)

				Այսպիսի ֆուտբոլային դահլիճը պատկանում է հասարակական սեփականությանը			
	Անուն	Անուն	Քաղաք	Հասցեագրիչ	Ձեռք	Ձեռք	Ձեռք
Անուն	Կ. ԼՈՒԻՍԱՆ	Անուն	Քաղաք		01	02	02
Անուն	Կ. ԶՈՒԿՈՒՆ	Անուն	Քաղաք	Դրամական և հասցեագրիչ			
Անուն		Անուն	Քաղաք				

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վազոն տնակներում(օպերատորական շինությունում):

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 2 հատ անիվների լվացման հարթակ՝ յուրաքանչյուրը 8,0x3,5 մ չափերի: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած հոսքաջրերն ուղղորդվելու են տարածքում տեղադրված բիոզուգարաններ, իսկ շինարարական հոսքաջրերը միավորվելու են շինհրապարակում գտնվող մեկ ջրահեռացման ցանցին: Կապալառուի կողմից շինարարական ջրերից և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բավարար չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադիր:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց ցանցաթաղանթով: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

10.1 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ

Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Օգտագործվելու են, մասնավորապես.

- Ավտոմոբիլային ամբարձիչ,
- Կցորդային բեռնատար
- Կցորդ
- Ավտոմոբիլային մանիպուլյատոր
- Ավտոաշտարակ՝ 2 հատ
- Ինքնաթափ
- Հորատող մեքենա 6 հատ
- Բետոնախառնիչ՝ 3 հատ

10.2 Լուսավորություն և ջեռուցում. Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Տարածքում աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր հանգստի կացարան(տնակ), որի լուսավորությունը և ջեռուցումը կկատարվի ժամանակավոր էլեկտրական հոսանքի անցկացման՝ դիզելգեներատորների միջոցով:

10.3 Հողային ռեսուրսներ. նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա էլեկտրական գծի անցկացման նպատակով խրամուղիների փորման, հողատարածքի

ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի կառուցման հողային աշխատանքներ: Տարածքում բացակայում է բուսահողը:

Ենթակայանի և մալուխագծերի անցկացման համար փորվելու է մոտ 100մ³ գրունտ, որից մոտ 75մ³ կատարվելու է հետլիցք: Մնացած մոտ 25մ³ հողային գրունտն հանձնվելու է կհեռացվի համայնքի կողմից հատկացված վայր՝ 23կմ հեռավորության վրա:

Արևային կայանի կառուցման արդյունքում հանվելու է վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքեր՝ 950մ³, 100մ³ ետլիցք, լուսավորության հենասյունների ցանկապատի 60մ³ փոստրակ, 10մ³ ետլիցք, մալուխների խրամուղիներ 410մ³ փոստրակ, 320 մ³ ետլիցք:

Ընդամենը հանվելու է 1520մ³ հողային գրունտ, որից 505մ³ կատարվելու է հետ լիցք, մնացած 1015մ³ կհեռացվի աղբավայր՝ համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Հողային զանգվածն օգտագործվելու է համայնքային կարիքների համար:

10.4 Ջրային ռեսուրսներ. Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շէրով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից:

Կեղտաջրերի հեռացում. Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող՝ շարժական 6 հատ 1,0*1,5 չափերի բիոգուգարաններից՝ լվացարանով:

10.5 Թափոններ. շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

- շինարարական աղբի տեսքով՝ նյութերի մնացորդներ (ավազ, շեբեն, ցեմենտ, պլաստմասե իրեր և այլն),
- աղտոտված լաթեր, պարկեր,
- կենցաղային աղբ
- մետաղական մնացորդներ(մետաղյա լարերի մնացորդներ, տարաներ և այլն):

10.6 Սոցիալական. շինարարական աշխատանքներին ներգրավվելու են 57 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Ներգրավվելու են համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

10.7 Բարեկարգում. կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյունների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

10.8 Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը.

Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են՝ 1,5 տարի, ըստ ժամանակացույցի 720 օր, որի մեջ ներառված է նաև պլանավորման, նախապատրաստական փուլերը:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ըստ նախատեսված ժամանակացույցի՝ հերթականությամբ.

- 1.Պլանավորում և կազմակերպում
2. Հողային աշխատանքներ

3. Խրամուղիների նախապատրաստում
4. Մետաղական կոնստրուկցիաների հիմքերի տեղադրում, մոնտաժում
5. Հոսանքի խրամուղիների նախապատրաստում և մալուխների անցկացում
6. Հողանցման կոնտուրի իրականացում
7. Ֆոտովոլտային վահանակների տեղադրում, ինվենտորների տեղադրում և այլն

Ժամանակացույց

Փոփոխական հոսանքի արժեքի, փոխաներախի և ճարտարապետի ամրագրման էլքիցներ

ԸՀ	Աշխատանքի անվանումը	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈՂՈՅՅՈՒՆԸ ԸԱՐԱՅՆԵՐՈՎ																							
		Ապրիլ				Մայիս				Հունիս				Հուլիս				Օգոստոս				Սեպտեմբեր			
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
1	Հանալիր փորձաքննություն և նախագծում																								
2	Սարքավորումների ծեցքերում																								
3	Հողային աշխատանքներ																								
4	Հրատում և կող կոնստրուկցիաների հիմքերի թեռուալին աշխատանքներ																								
5	Խրամուղիների քանդման աշխատանքներ																								
6	Խրամուղիների նախապատրաստական աշխատանքներ																								
7	Սալոխների անցկացում																								
8	Խրամուղիների ետիցք																								
9	Կող կոնստրուկցիաների տեղադրում																								
10	ՃՀ խողվակների տեղադրում																								
11	Վահանակների տեղադրում																								
12	ՃՀ մալուխների մոնտաժում																								
13	Ավազակալիմային ճանապարհի կառուցում																								
14	Ինվերտորների տեղադրում																								
15	AC վահանակների տեղադրում																								
16	Lan/Wi Fi համակարգի տեղադրում																								
17	Հողանցման համակարգի տեղադրում																								
18	Էլեկտրասարքավորումների մոնտաժում ենթակալանում																								
19	ԱՅԷԿ-ի միացումը 10/0.8ԿՎ լարման ենթակալանին																								
20	Կալանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																								

Փոփոխական փոսանքի արևրի, փոխանձրախի և ճարձաատարի անրագճան էրքիտներ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	ԱՃՆԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՎԱՅԵՐՈՎ																								
		Հոկտեմբեր				Լոյնբեր				Ռեյտեմբեր				Հունվար				Փետրվար				Մարտ				
		25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	
1	Հանախր փորձաքննարկուն և ճախազճում																									
2	Մարքալորումների ճեքքերում																									
3	Հողախն աշխատանքներ																									
4	Հորատում և կրող կրճատրուկցիանների հիմքերի բետոնախն աշխատանքներ																									
5	Խրանուղիների քանդճան աշխատանքներ																									
6	Հետևողական կրճատրուկցիանների ճզում, տարանքի ցանկաաաաաաա																									
7	Մալրանների տեղաաաա																									
8	AC ճալրախների տեղաաաա																									
9	Կրող կրճատրուկցիանների տեղաաաա																									
10	DC խողրվանների տեղաաաա																									
11	Կահանակների տեղաաաա																									
12	DC ճալրախների մոնտաաա																									
13	Ավազակաաաաաաաաաաաաաաաաաաաաաաա																									
14	Ինվերտորների տեղաաաա																									
15	AC վահանակների տեղաաաա																									
16	Lan/Wi Fi համակարգի տեղաաաա																									
17	Հողանքճան համակարգի տեղաաաա																									
18	Էլեկտրաաաաաաաաաաաաաաաաաաաաաաա																									
19	ԱՅԷԿ-ի միաաաաաա 10/0.8կՎ լարճան ենքաաաաա																									
20	Կաաաաի կարգաաաաաա, փորճարկում և ավաաաաաաաա փող																									

Փոփոխական հոսանքի արևոյի, փոխանելուսիի և մալուխատադի ամրագրան էքիզներ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱԹՅԵՐՈՎ																							
		Մարի				Մալիս				Հունիս				Հուլիս				Օգոստոս				Սեպտեմբեր			
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
1	Հանալիր փորնաքննություն և նախագծում																								
2	Սարքավորումների մեքերում																								
3	Հողային աշխատանքներ																								
4	Հրատում և կրող կոնստրուկցիաների հիմքերի քետոնային աշխատանքներ																								
5	Խրամոտիների քանդման աշխատանքներ																								
6	Խրամոտիների նախապատրաստական աշխատանքներ																								
7	Սարոխների անցկացում																								
8	Խրամոտիների ետլիցք																								
9	Կրող կոնստրուկցիաների տեղադրում																								
10	ՃՀ խողովակների տեղադրում																								
11	Վահանակների տեղադրում																								
12	ՃՀ մալուխների մոնտաժում																								
13	Ավազակոլաիժային ճանապարհի կառուցում																								
14	Ինվերսորների տեղադրում																								
15	ԱԸ վահանակների տեղադրում																								
16	Lan/Wi Fi համակարգի տեղադրում																								
17	Հողանցման համակարգի տեղադրում																								
18	Էլեկտրաաղբավորումների մոնտաժում ենթակայանում																								
19	ԱՅԷԿ-ի միացումը 10/0.8կՎ լարման ենթակայանին																								
20	Կալանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																								

Փնտրվական հրատարակման արևելյան, փոխակերպիչի և մալուխատարի ամրագրման էջեր

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈԴՈՒԹՅՈՒՆԸ ԸՄԱԾՆԵՐՈՎ																							
		Հունվեր				Լոյներ				Դեկտեմբեր				Հունվար				Փետրվար				Մարտ			
		25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48
1	Համալիր փորձաքննություն և նախագծում																								
2	Սարքավորումների մեքերում																								
3	Հողային աշխատանքներ																								
4	Հորատում և կրող կոնստրուկցիաների հիմքերի բետոնային աշխատանքներ																								
5	Խրամուղիների քանդման աշխատանքներ																								
6	Հետևողական կոնստրուկցիաների ձգում, տարանցի ցանկադատում																								
7	Սպուխների անցկացում																								
8	AC մալուխների տեղադրում																								
9	Կրող կոնստրուկցիաների տեղադրում																								
10	DC խողովակների տեղադրում																								
11	Վահանակների տեղադրում																								
12	DC մալուխների մոնտաժում																								
13	Ավազակրպիմային ճանապարհի կառուցում																								
14	Ինվերտորների տեղադրում																								
15	AC վահանակների տեղադրում																								
16	Lan/Wi Fi համակարգի տեղադրում																								
17	Հողանցման համակարգի տեղադրում																								
18	Էլեկտրաաղբակրումների մոնտաժում ենթակայանում																								
19	ԱՖԻԿ-ի միացումը 10/0.8կՎ լարման ենթակայանին																								
20	Կայանի կարգաբերում, գործարկում և ավարտական փուլ																								

11. Օգտագործվող բնատեսություններ և նյութեր

11.1 Ջուր: Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնատեսություններից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կնքվելու է Կապալառու կազմակերպության կողմից համապատասխան թույլտվությունները ստանալուց հետո՝ շինարարական աշխատանքների սկզբում:

Շինարարությունը տևելու է 720 օր, շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 57 աշխատակից:

Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է տարածքի հրդեհամարման, անիվների լվացման, տարածքի ջրման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\text{Է.ձ.}} = (n \times N + n1 \times N1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 7մարդ

N – ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

$n1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 50 մարդ

$N1$ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 720օր:

$W_{\text{ի.տ.}} = (7 \times 0.016 + 50 \times 0.025) \times 720 = 980,64 \text{մ}^3 / \text{շին. ժամ. կամ } 1,362 \text{մ}^3 / \text{օր:}$

Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից, ինչպես նաև անվտանգության կանոններից շահագործման փուլում տարածքի ջրցան չի նախատեսվում:

Անիվների լվացման համար Շինարարության փուլում նախատեսվում է, , մեքենաների լվացումը նախատեսվում է 2-3 հատ, օրը 1 անգամ հաճախականությամբ տեղադրվելու են 6 հատ լվացման կետեր, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q_2 = 0.8 \times 3 = 2.4 \text{լ/վրկ}$$

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

$S1$ – ջրվող տարածքի մակերեսը 1000 մ², (արդիրապարակ, ճանապարհներ)

$K1$ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 150 (առավելագույնը 150օր)

$U1 = 1000 \times 0.0015 \times 150 = 225 \text{մ}^3 / \text{շին. ժամ. կամ } 1,5 \text{մ}^3 / \text{օր:}$

11.2 Օգտագործվող նյութեր

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ,
- մետաղ՝ ալյումին, պողպատ,
- ներկ,
- մեկուսիչ նյութեր
- բետոն,
- խիճ,
- փայտանյութ:

Օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիայի հիմքերի բետոնացման աշխատանքների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա: Շինարարության ընթացքում բացառվելու են ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը:

12. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

ՇՄԱԳ շրջանակներում իրականացվել է արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է վեր հանել հնարավոր բոլոր ազդեցությունները, մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Նախատեսվող գործունեության տարածքը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Կայանի կառուցման շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի

վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու՝

- Կայանի և ենթակայանի աշխատանքների ընթացքում օդային ավազան արտանետումների:
- Ջրային և հողային ռեսուրսների օգտագործման:
- Լանդշաֆտի, Կենդանական և Բուսական աշխարհի փոփոխությունների:
- Շինարարական թափոնների, Կայանի աշխատանքի ընթացքում և ապամոնտաժումից հետո առաջացող թափոնների կառավարման:
- Արտակարգ իրավիճակների առաջացման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ: Այդ նպատակով օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ:

Գեղարքունիքի մարզն աչքի է ընկնում արևային էներգիայի պոտենցիալով, տարածքը լավագույններից մեկն է արևային էներգիայի տեխնոլոգիաների առումով՝ արեգակնային ֆոտովոլտային տեխնոլոգիաների և արեգակնային ջրատաքացուցիչների կիրառման տեսանկյունից: Արևային ժամերի միջին թիվը տարածքում կազմում է տարեկան ավելի քան 2600 ժամ/տարի:

12. 1 Օդային ավազան.

Շինարարության փուլ. գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Արևային կայանի համար նախատեսված տարածքը 443,7 մ հեռու է ամենամոտ բնակելի տարածքից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում Օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով հայտի կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

12. 2 Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլ Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շէրով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային

հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիրը կկնքվի գործունեության իրականացման շինարարության փուլում՝ համապատասխան լիցենզիա ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ, հստակեցնելով ջրի մատակարարման աղբյուրը:

Համաձայն կատարված ուսումնասիրության՝ նախատեսվող գործունեության տարածքը բնութագրվում է որպես գրունտային ջրերի սնման, կուտակման բեռնաթափման շրջան: Ստորերկրյա ջրերը բեռնաթափվում են Սևանա լիճ: Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերն ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 5 մ-ից ցածր հորիզոններում: Գործունեության տարածքում բացակայում են մակերևութային ջրային հոսքերը, իսկ Սևանա լիճը գտնվում մոտ 7,6 կմ-ից ավելի, Հրազդան գետի փակ հոսքը գտնվում է՝ 771մ հեռավորության վրա: Գործունեության մոտակա տարածքից Հրազդան գետը հոսում է փակ հոսքով՝ հիդրոտեխնիկական կառույցի միջով: Ուստի գործունեության իրականացումը չի կարող անմիջական ազդեցություն ունենալ Սևանա լճի և Հրազդան գետի վրա, ինչպես նաև գետի վարարումները չեն կարող ոչնչային լինել արևակայանի համար:

Գործունեության իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների աղտոտում չի կատարվելու, քանի որ տարածքում մակերևութային ջրահոսքերը բացակայում են:

Կեղտաջրերի հեռացում. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի շարժական բիոզուգարաններ՝ 1,0*1,5 չափերի՝ լվացարանով:

Բիոզուգարանների մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ արևային կայանի շինարարական և հետագա շահագործման փուլերում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի լինելու, ուստի արևակայանի շինարարության և շահագործման ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

Ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման նպատակով հայտում նախատեսվում են միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլանով:

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

12.3 Հողային ռեսուրսներ.

Շինարարության փուլ. Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, հորատանցքերի, տրանսֆորմատորի և յուղընդունիչի տեղադրման, մալուխային խրամուղիների կառուցման, ցանկապատի հենասյուների, մետաղացանցերի անցկացման համար հողային աշխատանքներ:

Ենթակայանի և մալուխագծերի անցկացման համար փորվելու է մոտ 100մ³ գրունտ, որից մոտ 75մ³ կատարվելու է հետլիցք: Մնացած մոտ 25մ³ հողային գրունտն հանձնվելու է կհեռացվի համայնքի կողմից հատկացված վայր՝ 23կմ հեռավորության վրա:

Արևային կայանի կառուցման արդյունքում հանվելու է վահանակները կող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքեր՝ 950մ³, 100 մ³ ետլիցք, լուսավորության հենասյունների ցանկապատի 60մ³ փոսորակ, 10 մ³ ետլիցք, մալուխների խրամուղիներ 410մ³ փոսորակ, 320 մ³ ետլիցք:

Ընդամենը հանվելու է 1520 մ³ հողային գրունտ, որից 505մ³ կատարվելու է հետ լիցք, մնացած 1015մ³ կհեռացվի աղբավայր՝ համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Հողային զանգվածն օգտագործվելու է համայնքային կարիքների համար:

Հողային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով հայտում նախատեսվում են բնապահպանական կառավարման պլանով միջոցառումներ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում: Արևային մոդուլներով զբաղեցված տարածքում ստեղծվելու է նոր էկոհամակարգ, դադարելու է գերարածեցումը, առաջանալու են ստվերային տարածքներ, առաջանալու է հողի խոնավության նոր ռեժիմ, նկատի ունենալով թվարկված փոփոխությունները, հնարավոր են հողի որակի առավել դրական փոփոխություններ:

12.4 Կենսաբազմազանություն. արևակայանի և ենթակայանի կառուցման տարածքը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր են՝ հողատեսքը էներգետիկայի: Տարածքն անտառածածկ չէ, բացակայում է ծառաթփային բուսականությունը, առկա է խոտածածկ: Գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, քանի որ գործունեության ենթակա տարածքներն արդեն ենթարկվել են մարդածին ազդեցության:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ:

Շինարարության ընթացքում՝ տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ տեսակներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հայտի կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ Արևային կայանի կառուցման ենթակա տարածքն անտառածածկ չէ: Տարածքում տեղ-տեղ առկա է տարախոտային բուսականությունը:

Շահագործման փուլում՝ Արևային էլեկտրակայանի կառուցման արդյունքում տարածքի մի մասը ծածկվում է արևային մոդուլներով և ստվերվում է հողի զգալի մասը: Արևային էլեկտրակայանի մոդուլները ստվերում են զբաղեցված տարածքի 25-30 տոկոսը: Մնացածը մասնակիորեն է ստվերվում, ընդ որում արևածագին և արևամուտին լուսավորվում է ամբողջովին՝ գտնվելով արևի ուղիղ ճառագայթների տակ: Մասնակիորեն լուսավորված տարածքներում ստեղծվելու է բուսական նոր համակեցություն, որի կազմում տեղ են գտնելու թե՛ տեղաբնիկ ստվերասեր բույսերը, որոնք մինչև այդ հնարավոր է, որ տարածքներում չեն աճել, որոշակիորեն պահպանվելու են նաև բուսատեսակների առկա տեսակային կազմը:

Ստեղծված նոր էկոհամակարգի վրա որոշակի ազդեցություն է թողնելու նաև հողի

խոնավության նոր ռեժիմը, որը հետևանք է լինելու մթնոլորտային տեղումներից առաջացող խոնավության անհամաչափ բաշխում Արևային մոդուլներով ծածկված տարածքի տեղումները ցած հոսելով մոդուլների ցածր եզրից՝ բաշխվելու են տարբեր ձևով, սակայն դրանք կենսաբազմազանության առումով էական փոփոխություն չեն կարող առաջացնել: Այսպիսով արևային մոդուլներով զբաղեցված տարածքում ստեղծվելու է նոր էկոհամակարգ, որը ժամանակի ընթացքում աստիճանաբար կայունանալու է: Նկատի ունենալով տարածքի գերարածվածությունը, նոր էկոհամակարգի ձևավորման հնարավորությունը և նպաստավոր պայմանները, ենթադրվում է, որ կենսաբազմազանության վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, դրանք առավել քան դրական միտում են ունենալու:

12.5 Թափոններ.

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինադրի և կենցաղային աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 3-4-րդ դասերին:

Առաջանալու է.

- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ չտեսկավորված սև մետաղներ պարունակող թափոններ(ծածկագիր՝ 35131100 01 00 4)՝400կգ, չտեսկավորված այլումինի ջարդոն (ծածկագիր՝ 3531010101995)՝350կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝140կգ թափոնների տեսքով:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)-2մ³:
- Շինարարական նյութերի մնացորդներ, քանդման ընթացքում առաջացած շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 30մ³ ծավալով:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 1015 մ³:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսկավորված աղբ՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) 4200կգ/տարի քանակով:

Կենցաղային աղբի հաշվարկները.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է/ըստ ամենաձանրաբեռնված հերթափոխի/,

հետևաբար,

$$M=57*120=6840կգ/տարի$$

Նախատեսվող գործունեությունը տևելու է մոտ 2 տարի, ուստի կենցաղային աղբի տարեկան քանակը կկազմի.

6840*2=13680կգ/տարի

Թափոնների ճիշտ կառավարման և վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա նվազագույնի հասցնելու նպատակով հայտում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլ Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանների հնարավոր առաջացող թափոններն են.

• Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 15,0տ/տարի քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորներում յուղերի քանակությամբ:

- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)- 4կգ/տարի
- Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4): - 4խմ/վթար
- Յուղերով աղտոտված ավազ (կոշտ՝ յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3): - 0.3խմ/վթար
- Մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ սև մետաղի (ծածկագիր՝ 35131100 01 00 4), ալյումինե (ծածկագիր՝ 353101101 01 99 5) և պղնձե (ծածկագիր՝ 3531030501013), համապատասխանաբար՝ 20կգ, 6կգ, 8կգ:

Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

12.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող և բնության հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքներ, արգելավայրերը:

Ուսումնասիրվող տարածքի դաշտային-հնագիտական հետազոտության համաձայն անհրաժեշտ է նշել, որ այն գտնվում է խորհրդային շրջանում որպես արտադրական տարածք օգտագործված, այժմ շինադրով լցված տարածքում, այն ենթարկվել է մեխորացիայի, հարթեցվել, ուստի եթե այստեղ հնագիտական հուշարձաններ անգամ եղել են՝ չեն պահպանվել (նկար): Ուսումնասիրության են ենթարկվել նաև տարածքի երկրաբանական հետախուզման համար իրականացված փոսորակի շերտագրական կտրվածքը, որը ներկայացված է ժամանակակից բուսահողի և վերին պլեյստոցենի քամաբեր, շեկավուն երանգ ունեցող նստվածքների հերթափոխով (վերից վար): Այս հետազոտության արդյունքում պատմա-մշակութային որևէ միավոր կամ դրանց հետքեր չեն փաստագրվել:



Ամենամոտ հատուկ պահպանվող տարածքը «Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ) Երկրաբանական հուշարձանն է, որը գտնվում է 4.7 կմ հեռավորության վրա: Նկատի ունենալով ուսումնասիրության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ Պատմամշակութային և բնության հուշարձանների վրա որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության

տրամադրման դեպքում:

12. 7 Էկոլոգիապես զգայուն տարածքներ.

Գործունեության վայրը չի առնչվում՝ վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

12. 8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարության փուլ Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ
- օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման,
- հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Համաձայն կատարված «Հայր և որդի տիտուլյաններ»ՄՊԸ-ի ուսումնասիրությունների՝ գործունեության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել.

- հնարավոր հրդեհային իրավիճակների,
- կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Արտակարգ իրավիճակների և անվտանգությունն ապահովելու նպատակով տարածքն ապահովված է լինելու հակահրդեհային վահանակներով, օդափոխության և հակահրդեհային համակարգերով, տեսահսկման այլ ազդանշանային սարքերով:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

12. 9 Աղմուկ և թրթռում.

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը ցածր է, քանի որ բացակայում են աղմուկ առաջացնող արտադրությունները: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության

քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության փուլ: Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող գործունեության տարածքը բնակավայրերից գտնվում է հեռավորության վրա, ուստի աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակչության վրա: Արևային էլեկտրակայանի շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը Գագարինից՝ 443,7 մ և Գեղամավանից՝ 1,565 կմ:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա:

12. 10 Մարդու առողջություն և աշխատանքի անվտանգություն.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում

հնարավոր վթարների հետ, որից խուսափելու համար անհրաժեշտ է աշխատանքի ճիշտ կամակերպում և աշխատանքի ընթացքում անվտանգության պահպանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ:

Պոտենցիալ վտանգ առողջության և անվտանգության համար կարող է առաջանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի (աղտոտման) պատճառով:

Շինարարության ամբողջ ընթացքում ապահովվելու է բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Կայանի կառուցման փուլում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները:

12. 11 Սոցիալական ազդեցություն.

Շինարարության փուլ Գործունեությունն իրականացվելու է Գազարին բնակավայրի վարչական տարածքում: Գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու: Գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհը:

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 57 մարդու համար:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Արևային կայանի կառուցումը նախատեսում է որոշակի սոցիալական ազդեցություններ:

Նախագծի հիմնական սոցիալական ազդեցությունները հետևյալն են՝

- Արոտավայրերի հնարավոր սահմանափակում՝ տարածքից դուրս գործունեության դեպքում:
- Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր վնասներ արոտավայրերի ճանապարհին:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցությունները կապված կլինեն տարածքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծման և հնարավոր աշխատատեղերի բացման հետ:

Մարզում արևային կայանների հիմնումը կստեղծի աշխատատեղեր սոցիալապես անապահով խավի համար և որոշակիորեն կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Շահագործման փուլում մոնիթորինգ իրականացնելու նպատակով ընդգրկվելու են 2-4 աշխատողներ, որոնք աշխատելու են հերթափոխային գրաֆիկով:

Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

12. 12 Լանդշաֆտ. Բարեկարգում.

«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության Արևակայանը տեղակայվելու է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում, Սևանի լեռնաշղթայի հյուսիս-արևմուտքում, Հրազդան գետի ձախափնյակում, Գործարանային փողոց թիվ 7, թիվ 16 հողամասեր հասցեում: Ֆոտովոլտային կայանի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լայն. 40°32'50.40"N և արլ. երկայն. 44°51'54.47"E, տարածքը տեղակայված է ծովի մակերևույթից 1888մ բարձրության վրա:

Շինարարության փուլում լանդշաֆտի որոշակի փոփոխություններ կառաջանան պայմանավորված հողային աշխատանքներով, որոնք լինելու են ժամանակավոր:

Կայանի կառուցման արդյունքում տեղի կունենա լանդշաֆտի փոքրածավալ փոփոխություն՝ պայմանավորված տարածքում արևային մոդուլների տեղադրումով: Լանդշաֆտի փոփոխությունը տեսանելի չի լինի բնակավայրերից՝ հեռավորության պատճառով: Իսկ ավտոճանապարհներից պատկերների փոփոխությունը էական չի լինի:

12.13 Աշխատանքի կազմակերպում և մարդու անվտանգություն. արևակայանի, ենթակայանի, մալուխագծերի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ՀՀ կառավարության N363-Ն 02.04.2009թ. որոշման պահանջներին համաձայն:

12. 14 Էլեկտրական և մագնիսական դաշտ: Արևակայանը և ենթակայանը նախագծվել են ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան: Օդային գիծն ունի ընդամենը 40մ երկարություն թռիչքաձև միանում է գոյություն ունեցող 110կՎ ՕԳ հենարանին, նկատի ունենալով բնակավայրերից ունեցած հեռավորությունը, այն չի կարող զգալի էլեկտրական և մագնիսական դաշտ ստեղծել և որևէ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և բավականին մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրերի վրա:

Արևային կայանի շինարարությունը և շահագործումը կատարվելու է ՀՀ կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի N 1933-Ն որոշման՝ «ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ պահանջներին համապատասխան:

13. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը շինարարության և շահագործման փուլերում

Գործունեության իրականացման ենթակա տարածքը ներառում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքը: Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում նախատեսվում է 9.687.6ԿՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 10/0.8/ տրանսֆորմատորային երկու ենթակայանների կառուցում: Արևային ֆոտովոլտային կայանը արևային էլեկտրաէներգիայի լուծումներով էներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է: Դրա միջոցով հնարավոր է դառնում արևի էներգիան կերպափոխելու էլեկտրական

հաստատուն կամ փոփոխական հոսանքի, և ունենալ մատչելի գներով էլեկտրաէներգիայի սպառում:

Գործունեությունն իրականացվելու է ՀՀ կառավարության «Մինչև 2040 թվականը ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի» արևակայանների զարգացման (II. էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթությունները), ինչպես նաև էներգետիկայի զարգացման վերաբերյալ ուղեցույցների պահանջներին համապատասխան: Միաժամանակ պահպանելով ՀՀ կառավարության՝ 2000 թվականի մայիսի 18-ի «1000 Վ-ից բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնների» N 249 և 1998 թվականի մայիսի 26-ի «էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների չափերը և դրանց օգտագործման կարգը» N313 որոշումների պահանջները և գործող սանիտարահամաճարակաբանական կանոնների ու նորմերի, ինչպես նաև 2009 թվականի ապրիլի 2-ի «էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N363-Ն որոշման պահանջները:

Նախատեսվող գործունեությունն իրականացնելիս հաշվի են առնվել նաև 2006 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՀ կառավարության N1943-Ն որոշմամբ հաստատված՝ «էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի VIII բաժնի պահանջները և ցուցումները՝ գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանը նվազեցնելու նպատակով:

Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, ենթակառուցվածքների փոփոխություններ չի առաջանալու: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ:

Գործունեության տարածքն արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ այն գտնվում է խորհրդային շրջանում որպես արտադրական տարածք՝ օգտագործված, շինաղբով լցված տարածքում: Հողային ծածկույթն արդեն իսկ ենթարկվել է էրոզիայի: Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ: Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու արևային կայանի և օդային գծի, ենթակայանի կառուցման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման, օդային գծի անցկացման տարածքի կենսաբազմազանության պահպանման հետ, իսկ շահագործման փուլում՝ կայանի անվտանգ շահագործման հետ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն

ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

13.1.1 Օդային ավազան.

Շինարարության փուլ. Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով.

- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կկատարվի փակ ծածկ ունեցող մեքենաներով, իսկ նյութերը տեղափոխող մեքենաները կփակվեն անջրթափանց թաղանթով,
- տարածքում նյութերը կպահվեն ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ:

Շահագործման փուլ. Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

13.1.2 Հողային ռեսուրսներ.

Շինարարության փուլ. Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կկուտակվի տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով,
- մալուխագծերի անցկացման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում,
- հողային զանգվածն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կկայանել գրունտային ճանապարհի վրա,
- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

Շահագործման փուլ: Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.

- հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքում

13.1.3 Ջրային ռեսուրսներ.

Շինարարության փուլ: Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շէրով),

- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կդեղադրվեն 2 հատ՝ 2մ³ և 16մ³ տարողության ջրի բաքեր,

- շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,

- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,

- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած արտադրական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի :

Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի բիոզուգարաններ:

Բիոզուգարանների մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլ. Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.

- աշխատողների համար խմելու ջուրը բերել պատրաստի վիճակում՝ շէրով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի սանհանգույց (բիոզուգարան),
- բիոզուգարանների մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- արևային կայանի պանելների մաքրումը կկատարվի բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվի 500լ տարողության փակ բաք:

13.1.4 Կենսաբազմազանություն.

Շինարարության փուլ. Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել համապատասխան գերատեսչություններին, «Սևան»ԱՊ-ին,

- գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,

- բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխել և վերատնկել հատուկ պահպանման գոտում,

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

Շահագործման փուլ: Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.

- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

13.1.5 Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- խուսափել վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,
- նյութերի մնացորդները (մետաղական մասեր, մետաղալարեր, ներկեր և այլն) Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել, անհրաժեշտության դեպքում հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

- շինարարական թափոնները՝ շինադբ, բետոնի մնացորդներ, կհավաքվեն պարկերի մեջ և պարբերաբար կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- կենցաղային աղբը հավաքել պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ, պարբերաբար,

- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել

թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ խառնել կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխել աղբավայր:

Շահագործման փուլ: Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- կառուցել 2 հատ յուղընդունիչներ (հոր)՝ ընդհանուր 15-16մ³ տարողության, տրանսֆորմատորներից յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է մետաղական՝ իճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ,

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին,

- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ 7մ² չափերով փակ պահեստային շենքում՝ մետաղական վազոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն 10 տարվա օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակում չի նախատեսվում: Աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և ամենօր տեղափոխվելու է աշխատողների կողմից:

13.1.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով:

Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապէս կանգնեցնել բոլոր աշխատանքները,
- Տեղեկացնել տեղական իշխանութիւններին և մշակութի նախարարության
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապէս դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազոր մարմնին:

Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

13.1.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկական օգտագործել միայն սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները,
- շինարարության իրականացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաճոպանների պարը, թրթռումը:

Շահագործման փուլ Արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա, ուստի միջոցառումներ չեն նախատեսվում:

13.1.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակներով, հակահրդեհային կրակմարիչներով, տեղադրվելու են 2մ³ և 16մ³ ծավալներով 2 հատ ջրի բաքեր,
- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն,

- տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,
- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել,
- տարերային աղետների(քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման սարքերը, ապահովելով վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:

Շահագործման փուլ: Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանն ապահովվել հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, արտաքին լուսավորության հենասյուներով,
- ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներով, ենթակայանի տարածքում՝ 1 հատ հրդեհաշիջման վահանակով, 1 հատ հաշվառքի կետում և 1 հատ մուտքի մոտ,
- առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,
- պարբերաբար ստուգվելու են աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը,
- գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Տեխնածին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառվելու են միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարահանմանը:

13.1.9 Մարդու առողջություն, Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.

Գործունեության իրականացման ընթացքում մարդու առողջության և անվտանգության պահպանման, աշխատանքի ճիշտ կազմակերպման համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- արտադրական հրապարակն ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,
- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),
- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,
- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և

բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին,

- մալուխային գծերի տեղադրումը կատարել, բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,

- շինհրապարակն ապահովվել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառելով մեքենաների կուտակումները,

- նվազագույնի է հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- աշխատողներն ապահովել համապատասխան բանվորական հագուստով: Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-480* նորմերի:

Շահագործման փուլ. Արևակայանի, ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ոլորտին առնչվող ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Տեղադրվելու է.

- փոխակերպիչներ(ինվենտորներ), տեսահսկման համակարգ, տեսախցիկներ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,

- արևային կայանի և ենթակայանի տարածքն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով,

- առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով:

Տրանսֆորմատորային ենթակայանի և ՕԳ-ի շահագործման փուլում նախատեսվում է նաև.

- ՕԳ-ի անվտանգության գոտու պահպանում՝ 20մ,

- ՕԳ-ի ուղեգծի երկայնքով /երկարությունը 40մ/ երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից և այլնից մաքրված հողի շերտի ապահովում՝ ոչ պակաս 2,5 մ լայնությամբ,

- ցանկացած եղանակի ժամանակ ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում՝ ոչ ավելի ՕԳ ուղեգծից 0,5 կմ-ից,

- տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:

Էլեկտրահաղորդման գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:

13.1.10 Սոցիալական.

Շինարարության փուլ. Գործունեության իրականացման ընթացքում սոցիալական խնդիրներից խուսափելու նպատակով նախատեսվում է.

- բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,
- աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի են հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:

Գործունեության իրականացման շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր:

Շահագործման փուլում գործունեության իրականացումն ունենալու է համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ բացվելու են նոր աշխատատեղեր՝ 2-4 աշխատողների համար:

Հանրային քննարկումների ընթացքում համայնքի կողմից հարց բարձրացվեց և առաջարկվեց Ձեռնարկողին ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքին, մասնակցել համայնքում նախատեսվող ծրագրերի իրականացմանը, մասնավորապես ճանապարհների վերանորոգման, լուսավորության բարեկարգման աշխատանքներին և այլն:

Ձեռնարկողը պատրաստակամություն հայտնեց աջակցություն ցուցաբերել համայնքին, վերջինիս հետ փոխադարձ համաձայնությամբ ճշտել համայնքային խնդիրների աջակցման ուղղությունները:

Ընկերության և համայնքի հետ փոխադարձ համաձայնությամբ ընկերության կողմից համայնքին ցուցաբերվել է ֆինանսական օժանդակություն:

13.1.11 Բարեկարգում և Լանդշաֆտ.

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,
- հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները,
- գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերելով հնարավորինս նախկին տեսքի,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,
- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման

աշխատանքներ,

- մաքրվելու են պանելների մակերևույթները,
- Կայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվում է՝ 2 մ բարձրության, 2030x2700x25մմ չափերի մետաղական ցանկապատով՝ նախատեսելով մեքենաների 2 դարպասային մուտք (գլխավոր և օժանդակ):
- Ենթակայանի տարածքը ցանկապատվելու է 2 բարձրության ցինկապատ մետաղալարով՝ 50x50x2.5մմ չափերի՝ բետոնյա հիմքերով:

Կանաչապատում. Ելնելով գործունեության բնույթից՝ պայմանավորված հրդեհավտանգ լինելու հանգամանքով, արևակայանի և ենթակայանի տարածքում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվում: Համայնքի կողմից տրված նախագծային առաջադրանքով նախատեսվում է 10% կանաչապատում, որը Նախաձեռնողը նախատեսում է իրականացնել խոտի ցանքսի տեսքով՝ խախտված տարածքների վերականգնման նպատակով:

14. Մոնիթորինգ.

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված:

Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն,
- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- աշխատողների իրազեկում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
 - անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական մոնիթորինգի իրականացում՝ 2-4 աշխատողի միջոցով,
 - տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել՝ նկատած անհամապատասխանությունները,
 - շինարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանում,
 - շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
 - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարել շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
 - շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
 - բարեկարգման աշխատանքների իրականացման ապահովում:

Արևային կայանի կառուցման համար նախատեսվող շրջակա միջավայրի վրա

ազդեցության բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը ներառված են կայանի շինարարության և շահագործման ծախսերում:

15. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է հայտում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները՝ աղյուսակային տեսքով: Այն ամփոփում է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմման միջոցառումները, իրականացնող մարմինների վերաբերյալ տեղեկատվությունը:

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	<p>Շինարարությանփուլ</p> <p>Օդային ավազան</p>	<p>Օդային ավազան արտանետումները մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհի շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան ըստ անհրաժեշտության: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին, - գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով, -տարածքում նույնիսկ պահվել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ, -շինարարական տեխնիկան և 	<p>Կապալառու</p>	<p>«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ</p>

	Շահագործման փուլ	տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ: Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:		
2	Հողային ռեսուրսներ	Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.	Կապալառու	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»ՍՊԸ
		- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով, - օդային գծի անցկացման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կուտակել անմիջական հորատանքների հարևանությամբ՝ ծածկված վիճակում, - հողային զանգվածն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,		

	Շահագործման փուլ	<p>- ճանապարհի ջրցանր և գրունտի խոնավեցումը կատարել այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,</p> <p>- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,</p> <p>- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանել գրունտային ճանապարհի վրա,</p> <p>- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:</p> <p>Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <p>- ընկերության կողմից հնարավորինս կպահպանվեն գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները,</p> <p>- շինարարության ավարտից հետո՝ մշտական օգտագործման համար տրամադրվող հողերի վերականգնում:</p>		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.</p> <p>- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար</p>	Կապալառու	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»ՍՊԸ

կմատակարարվի խմելու որակի ջուր
 Բերովի(շշերով),

- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով կտեղադրվեն 2 հատ՝ 2մ³ և 16մ³ --- տարողության ջրի բաքեր,
- շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,
- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,
- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած արտադրական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը

	<p>Շահագործման փուլ</p>	<p>կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,</p> <p>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի:</p> <p>Կեղտաջրեր.</p> <p>- Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրի հեռացման համար տեղադրել բիոզուգարան:</p> <p>- Բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.</p> <p>- աշխատողների համար խմելու ջուրը կբերվի պատրաստի վիճակում՝ շէրով,</p> <p>- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները կհոգան սանիտարական հանգույցից (բիոզուգարան),</p> <p>- բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>- արևային կայանի պանելների մաքրումը կկատարվի բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվի 500լ տարողության փակ բաք:</p>	
--	--------------------------------	---	--

4	Կենսաբազմազանություն	<p>Տարածում կենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաշտությունից ելնելով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել համապատասխան գերատեսչություններին, «Սևան»ԱՊ-ին, - գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով, - բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխել և վերատնկել հատուկ պահպանման գոտի, - շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ 	Կապալառու	«ՍՈՒԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»ՍՊԸ
---	----------------------	--	-----------	-------------------------

	<p>Շահագործման փուլ</p>	<p>կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:</p> <p>Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - լայնակների, ճուպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով, - հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով: 		
5	<p>Թափոններ</p>	<p>Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որի համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - Տարածքում խուսափել վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից, - նյութերի մնացորդները(մետաղական մասեր, մետաղալարեր, ներկեր և այլն) հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն Կապալառու կազմակերպության կողմից, կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար, - շինարարական թափոնները՝ շինադր, բետոնյա մնացորդներ, կքավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված 	<p>Կապալառու</p>	<p>«ՍՈՒԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»ՍՊԸ</p>

Շահագործման փուլ

վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- կենցաղային աղբը հավաքվել պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,
- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ խառնվելու են կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխվելու են աղբավայր:

Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- կառուցվելու է 2հատ՝ 15մ3 ընդհանուր տարողությամբ յուղընդունիչներ (հոր)՝ յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է երկաթբետոնի հիմքով, խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ,
- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,
- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային

		<p>յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,</p> <ul style="list-style-type: none"> - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, - ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին, - յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, - սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: <p>Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ, որոնք կուտակվելու են տարածքում՝ փակ շենքում՝ վազոն տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը:</p>		
6.	Արտակարգ իրավիճակներ	<p>Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, տեղադրվելու 	Կապալառու	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»ՍՊԸ

է 2 հատ ջրի բաքեր,

- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն,
- տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,
